

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

Ապօրէն Ունեցուածքի Վերադարձը՝ Ժողովուրդի Պահանջ

Հայաստանի նախագահ Արմեն Սարգսեան ստորագրեց Ազգային ժողովին կողմէ հաստատուած՝ «Ապօրէն գոյքի բռնագանձման մասին» օրէնքը: Հակառակ ընտանիքի անդամներուն մասին կեղծ լուրեր տարածելու միջոցաւ իր վրայ հոգեբանական ճնշում գործադրելու փորձերուն, նախագահը խորհրդակցութիւններուն եւ իրաւաբաններուն հետ երկար ուսումնասիրելէ ետք, որոշեց ստորագրել օրինագիծը արձանագրելով, որ մօտէն պիտի հետեւի անոր անաչառ գործադրութեան, որպէսզի այդ չօգտագործուի քաղաքական եւ այլ շահադիտական նպատակներով:

Նախագահի այս ստորագրութեամբ գործի կը դրուի Յեղափոխութենէն ադիցն խորհրդարանի կողմէ առնուած ամենէն կարեւոր որոշումներէն մէկը, որու շնորհիւ կարելի պիտի դառնայ պետութեան վերադարձնել տարիներու ընթացքին չարաշահուածներու միջոցաւ ձեռք ձգուած կալուածներն ու գոյքերը:

Այս օրէնքի ընդունումով մտահոգ են յատկապէս նախկին իշխանութեան մօտ կանգնած ու անոր բարիքներէն լայնօրէն օգտուած տարրերն ու շրջանակները, որոնց շուրջ շղթա սկսած է սեղմուիլ ու այժմ կ'անդրադառնան, որ եկած է հաշիւ ներկայացնելու պահը:

Այս օրինագծի իւրայատկութիւնը այն է որ, բռնագրաւուած կրնայ կատարուիլ առանց դատական երկարատեւ գործընթացներու, որոնք կրնան տարիներ տեւել եւ արդիւնքի չհասնիլ: Միւս կողմէ, այն անհատները, որոնք այս օրէնքով պարտադրուած կ'ըլլայ վերադարձնելու իրենց ապօրէն ունեցուածքը, չեն կրնար ենթարկուիլ քրեական պատժամիջոցներու, այսինքն չեն կրնար բանտարկուիլ՝ նախկին իրենց արարքներուն համար:

Առաջին հայեացքով կրնայ տարօրինակ թուիլ եւ անարդար, սակայն առանց դատավճռի գոյքի բռնագրաւման օրինակաւորութիւնը հաստատուած է ՄԱԿ-ի Կոռուպցիայի դէմ պայքարի 2004 թուականի ուխտով, որ նաեւ ստորագրուած է Հայաստանի կողմէ: Այդ համաձայնագրով, երկրները իրաւունք ունին առանց մեղադրական դատավճռի գոյքի բռնագրաւում արտօսել այն պարագաներուն, երբ յանցագործը չի կրնար քրեական հետապնդման ենթարկուել մահուան, փախուստի դիմելու եւ նման այլ դէպքերու պարա-

Հայաստանի Նախագահը Ստորագրեց Ապօրինի Գոյքի Բռնագանձման Օրէնքը



Նախագահ Արմեն Սարգսեան կը ստորագրէ Ազգային ժողովի օրէնքներէն մէկը

Հայաստանի նախագահ Արմեն Սարգսեան Մայիս 11-ին ստորագրած է «Ապօրինի գոյքի բռնագանձման մասին» օրէնքը եւ 14 յարակից օրէնքները, կը յայտնեն նախագահի աշխատակազմէն: Օրէնքները Ազգային ժողովի կողմէն նախագահի ստորագրման ներկայացուած էին Ապրիլ 21-ին:

Ինչպէս կը նշեն նախագահի աշխատակազմէն, օրէնքի ընդունումը կառավարութիւնը կը հիմնաւորէ յանցաւորութեան դէմ պայքարի արդիւնաւէտութիւնը բարձրացնելու եւ այդ յանցաւոր գործունէութեան արդիւնքով ապօրինի ձեռք բերուած գոյքը բռնագանձելու անհրաժեշտութեամբ: Հարողագրութեամբ կը լինեն նաեւ, որ օրէնքի նախագիծի քննարկման փուլին եւ գալն նախագահի

ստորագրման ներկայացուելն չենտուց, բազմաթիւ հասարակական կազմակերպութիւններ, օտարերկրեայ ներդրողներ, իրաւաբանական եւ մասնագիտական հանրութեան եւ գործարար շրջանակներու ներկայացուցիչներ, իրաւապաշտպաններ եւ անհատ քաղաքացիներ, իրենց մտահոգութիւնը ներկայացուցած են նախագահի աշխատակազմին, օրէնքի սահմանադրականութեան, օրէնքի կիրառման հետեւանքով հնարաւոր քրոնփցիտն վտանգներու, ինչպէս նաեւ տնտեսութեան զարգացման, ներդրումային միջավայրի եւ ֆինանսական կայունութեան վրայ օրէնքի հնարաւոր բացասական ազդեցութեան եւ հետեւանքներու վերա-

Կլէմտէի Մէջ Վարակակիրներու Թիւը Կը Շարունակէ Բարձրանալ



«Քորոնա» ժահրով վարակուածներու թիւը կը շարունակէ բարձրանալ Լոս Անճելըս Գաւառը ընդգրկող քաղաքներուն մէջ:

Ամէնէն աւելի մտահոգիչ է պարագան Կլէմտէի մէջ, ուր 200 հազար բնակչութեան գրեթէ կէսը հայեր են եւ մինչեւ օրս արձանագրուած է մօտ 800 վարակակիր ու 52 մահ: Համեմատելով մօտակա միւս քաղաքներուն հետ, Կլէմտէի ամենէն բարձրն է Լոս Անճելըս եւ Լոնկ Պիչ քաղաքներէն ետք, որոնք ունին յաջորդաբար չորս միլիոն եւ 500 հազար ժողովուրդ:

Գաւառի Առողջապահական Բաժանմունքի ամէնօրեայ ասուլիսներու ընթացքին Նոնա Յովանիսեան յաճախ Հայերէն լեզուով

պատգամ կ'ուղղէ՝ կոչ ընելով Ամերիկահայ համայնքին, որ շարունակեն հետեւիլ առողջութեան կանոններուն, չվարակուելու համար հիւանդութեամբ:

Լոս Անճելըս Գաւառի Առողջապահութեան Բաժանմունքի հրապարակած վերջին տեղեկութիւններուն համաձայն, Մայիս 13-ի դրութեամբ հայաշատ այլ շրջանները կը ներկայացնեն հետեւեալ պատկերը. Պըրպէնք 318 վարակի դէպք, Հոլիվուտ 214 դէպք, Փոքրիկ Հայաստան 164 դէպք, Մոնթեպելլո 231 դէպք, Հիւսիսային Հոլիվուտ 517 դէպք, Նորթրիճ 225 դէպք, Փասատինա 593 դէպք, Սանլէնտ 113 դէպք եւ Թահանկա 94 դէպք:

Ամերիկայի Գոնկրետ Կոշտ Բննադատութեան Կ'ենթարկէ Ատրպէյճանին

Ատրպէյճանի կ'օգտագործէ «Քորոնա» ժահրի վարակը որպէս պատրուակ, երկրի քաղաքական ճնշումները կատարելու եւ խօսքի ազատութիւնը սահմանափակելու նպատակով:

«Այս համավարակի ընթացքին, առողջապահութեան միջոցները որեւէ կերպ չեն արդարացներ քաղաքական բռնաճնշումները: Մենք անհանգստացած ենք գեկուցներով, որոնք կը վկայեն, որ Ատրպէյճանի կառավարութիւնը աւելի կը սահմանափակէ սեփական քաղաքացիներուն ազատ արտայայտման, մամուլին ազատօրէն օգտուելու եւ տեղեկատուութեան իրաւունքը, կատարելով ձեռքաւարութիւններ, տուգանքներ, բռնութիւններ եւ, հնարաւոր է, խոշտանգումներ: Երկրի իշխանութիւնները պէտք է դադարեցնեն, այս համաշխարհային ճգնաժամի պատրուակով, սահմանափակելը Ատրպէյճանի ժողովրդական ճակատ կուսակցութեան անդամներու եւ այլ գործիչներու ու թղթակիցներու ազատ խօսքի իրաւունքը», - ըստած է քոնկրետի մարդու իրաւունքներու հարցերով Հելսինկեան յանձնաժողովի յայտարարութեան մէջ:

Լոս Անճելոսի Հայաստանի Հիւպատոսութեան Զանքերով Երեւան 34 ՀՀ Քաղաքացիներ



Լոս Անճելոսի ՀՀ գլխաւոր հիւպատոսութեան օժանդակութեամբ՝ ընթացիկ տարուայ Մայիս 2-ին եւ 9-ին կայացած են Լոս Անճելոս-Ամսթրամ -Մինսք-Երեւան չուերթներ. Հայաստան վերադարձած է 34 ՀՀ քաղաքացի:

Ըստ «Արմէնփրես»-ի այս մասին կը տեղեկացնեն Լոս Անճելոսի ՀՀ գլխաւոր հիւպատոսութեան:

«Ս.թ. Մայիսի 2-ին եւ 9-ին կայացաւ Լոս Անճելոս-Ամսթրամ -Մինսք-Երեւան չուերթը, որով Քալիֆորնիայից Մայիսի 2-ին

ՎԱՅԱՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Մեկնարկը Տրուեց. Ինչպես Կը Բռնագանձեն Ապօրինի Գոյքը

ՆԱԻՐԱ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՀՀ նախագահ Արմէն Սարգսեանն ի վերջոյ ստորագրեց «ապօրինի գոյքի բռնագանձման մասին» օրէնքը եւ 14 յարակից օրէնքները: Ընդ որում, դրանք Ազգային ժողովի կողմից Հանրապետութեան նախագահի ստորագրման են ներկայացուել 2020թ. Ապրիլի 21-ին եւ Արմէն Սարգսեանն այն ստորագրեց վերջին օրով: Եւ չնայած դրան, Սարգսեանը նաեւ նշել է, որ ուշադիր հետեւելու է օրէնքի կիրառմանը եւ ամէն դէպքում մտահոգութիւններ կան:

«Հանրապետութեան նախագահը մեծապէս կարեւորում է յանցաւորութեան դէմ պայքարը: Միեւնոյն ժամանակ ակնկալում է, որ օրէնքը պէտք է կիրառուի ընդունման իրաւաչափ նպատակին խիստ համապատասխան՝ որպէս բացառիկ միջոց առանձնապէս բարձր հանրային վտանգաւորութիւն ունեցող յանցագործութիւնների դէմ պայքարելու համար: Օրէնքի անբարեխիղճ կիրառումը կարող է խաթարել պետութեան նկատմամբ վստահութիւնը եւ վտանգի տակ դնել դրա արդիւնաւէտութիւնը: Հարկ է հաշուի առնել նաեւ անձնական տուեալների, ձեռնարկատիրական եւ մասնագիտական գործունէութեան, ինչպէս նաեւ բանկային գաղտնիք կազմող տեղեկատուութեան պաշտպանութեան հարցերի առանձնապատուկ զգալունութիւնը, մասնաւորապէս՝ գործարար շրջանակների եւ ընդհանրապէս հանրութեան համար: Քանի որ օրէնքով սահմանուած է դրա կիրառման տիրոջթում գտնուող անձանց լայն շրջանակ, կարեւոր է, որ նրանց վերաբերեալ ստացուող տեղեկատուութեան ծաւալը լինի պիտանի, անհրաժեշտ, համաչափ եւ համապատասխանի օրէնքի ընդունման նպատակներին: Կիրառման ընթացքում պէտք է հաշուի առնել անձանց մասնաւոր եւ ընտանեկան կեանքի անձեռնմխելիութեան իրաւունքը, անձնական տուեալների պաշտպանութեան սահմանադրական պահանջները եւ բացառել դրանց նկատմամբ ցանկացած անհամաչափ միջամտութիւն: Օրէնքը պէտք է կիրառուի բարձր պատասխանատուութեամբ՝ բացառելով կոռուպցիոն դրսեւորումները, խտրականութիւնը, ոչ իրաւահավասար ազդեցութեան ռիսկերը», - ասուած է Արմէն Սարգսեանի աշխատակազմի կողմից տարածած հաղորդագրութեան մէջ:

Եւ այս ֆօնին ուշագրաւ է, որ Նիկոլ Փաշինեանը եւ արդարադատութեան նախարար Ռուստամ Բաղասեանը քննարկել են դատական համակարգի բարեփոխումները: Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են հարցերի լայն շրջանակ, այդ թւում՝ ապօրինի ծագում ունեցող գոյքի բռնագանձման մասին օրէնքի կիրառման մեխանիզմները, որը երեկ ստորագրուել էր ՀՀ նախագահի կողմից:

Իսկ ինչ է ենթադրում օրէնքը, եւ ինչպէս կարող են բռնագանձել գոյքը: «Ապօրինի ծագում ունեցող գոյքի բռնագանձման մասին» Հայաստանի Հանրապետութեան օրէնքի նախագիծը թոյլ է տալիս ուսումնասիրել գոյքը, դրա ձեռքբերումը եւ օգտագործումը եւ ներկայացնել բռնագանձման պահանջ, եթէ գոյքի ձեռքբերումը չի հիմնաւորուած օրինական եկամուտներով: Նշուած դէպքում գոյքը օրէնքի իմաստով համարուած է ապօրինի ծագում ունեցող եւ ենթակալ է բռնագանձման: Նախագիծը ներմուծում է առանց մեղադրական դատավճռի գոյքի բռնագանձման մոդելը՝ չհիմնավորուող հարստացման բռնագանձումը: Այս քաղաքացիաիրաւական վարոյթի հիմքում ընկած են անձի օրինական աղբիւրներից ստացուած եկամուտների եւ նրա փաստացի եկամուտների համեմատութեան հիման վրայ բացառապատուած էական անհամապատասխանութիւնները: Յանցաւոր արարքի հետ անուղղակի կապի հաստատումը պարտադիր պայման է: Այս դէպքում ապացուցման բեռը տեղափոխուած է պատասխանողի վրայ եւ ակտիւները բռնագանձուած են, եթէ չի ապացուցուած դրանց ստացման օրինական աղբիւրը: Նախագիծով ապօրինի ծագում ունեցող գոյքի բռնագանձման գործերով ուսումնասիրութիւնների իրականացման եւ հայցի հարուցման լիազօրութիւնը տրուած է Հայաստանի Հանրապետութեան գլխաւոր դատախազութեանը՝ որպէս պետական շահերի պաշտպանութեան հայցի տարատեսակ: Նախագիծով ուսումնասիրութիւնը սկսուած է քրէադատավարական որոշում ազդակների առկայութեան դէպքում, որից յետոյ ընթանում է քրէական ընթացակարգերից անկախ: Ապօրինի ծագում ունեցող գոյքի բռնագանձման պահանջը, կարող է ներկայացուել եւ քննուել ՀՀ քաղաքացիական դատավարութեան կարգով: Հաշուի առնելով այն հանգամանքը, որ գոյքի ծագման վերաբերեալ ապացույցները, այն ծաւալով, որով դրանք ձեռք բերելու հնարաւորութիւն չունի իրաւասումարմինը, գտնուած են գոյքը ձեռքբերած անձի մօտ՝ օրէնքի նախագիծը նախատեսում է հայցի բաւարարման հնարաւորութիւն, եթէ իրաւասու մարմինը ապացուցում է, որ պատասխանողին պատկանող գոյքը չի հիմնաւորուած հայցուորին հասանելի օրինական եկամուտների վերաբերեալ տուեալներով: Համապատասխանաբար, պատասխանող կարող է հերքել կանխաւարկածը՝ ապացուցելով գոյքի օրինական ձեռքբերումը՝ ներկայացնելով այն փաստաթղթերը, որոնք օրէնքի ուժով հասանելի են միայն պատասխանողին: Ամէն դէպքում, ապօրինի ծագում ունեցող գոյքը ենթակալ է բռնագանձման միայն այն դէպքում, երբ գոյքի եւ եկամուտների միջեւ անհամապատասխանութիւնը էական է, այն է՝ գոյքի շուկայական արժէքը գերազանցում է օրէնքով նախատեսուած սահմանաչափը»:

«ԺՈՂՈՎՈՒՐԴ»

Ներքաղաքական Պայքարի «Կարմիր Գծերը»

Նախօրէին վարչապետ Փաշինեանը խորհրդարանում պատասխանելով պատգամաւորների հարցերին՝ անդրադարձաւ նաեւ արցախեան բանակցային գործընթացին եւ, ըստ էութեան, վերահաստատեց այն թեզերը, որոնք առաջ էր քաշել աւելի վաղ: Ընդդիմութիւնն ու համացանցային հայրենասէրներն էլ, բնականաբար, առիթը բաց չթողեցին ու քարոզչական տոտալ գրոհ սկսեցին, որի իմաստը մօտաւորապէս հետեւեալն էր՝ «Հասէք, փրկէք, Նիկոլը խոստովանեց, որ թաքուն ծախում է Ղարաբաղը, յապաղելը հաւասարագօր է մահուան», եւ այլն: Ընդ որում՝ քարոզչական այդ ժխտի մէջ առաջին հայեացքից ողջամիտ թուացող հարցադրումներ էլ էին հնչում, բայց դա ընդհանուր պատկերը չէր փոխում: Ակնյայտ էր, որ Արցախի համար սրտացաւութեան շղարշի տակ ընդամէնը շատ տգեղ քաղաքական խաղեր են խաղում:

Խնդիրը նոյնիսկ այն չէ, որ անհետեւ շարքաւորումներ էին հնչում, օրինակ, թէ «ինչ է նշանակում Հայաստանի ժողովուրդը եւ Արցախի ժողովուրդը, այդ երբեք ունանի՞ց են այդ ժողովուրդները տարբեր»: Երեւի շատ բարդ է հասկանալը, որ հակամարտութեան մէջ ներգրաւուած են երեք պետական կազմաւորումներ, որոնցից երկուսը՝ միջազգայնօրէն ճանաչուած, երրորդը՝ առաջիմ ճանաչուած, եւ այդ երեք երկրներում էլ ապրում են քաղաքացիներ, առանց որոնց համաձայնութեան հնարաւոր չի լինելու հասնել խնդրի վերջնական կարգաւորման: Եւ ընդհանրապէս՝ ինչ է նշանակում բողոքել, որ Հայաստանի եւ Արցախի ժողովուրդներն առանձին-առանձին են նշուած ու միաժամանակ պահանջել, որ բանակցութիւնների սեղանի շուրջ Հայաստանն ու Արցախն առանձին-առանձին ներկայացուած լինեն: Ինչեւէ: Ծատ աւելի կարեւոր էին ընդդիմութեան հնչեցրած այն ուլտիմատիւ պահանջները, որ Փաշինեանն անյապաղ ներկայացնի հայկական կողմի «կարմիր գծերը», այսինքն՝ յայտարարի, թէ ինչը հայկական կողմը երբեք եւ ոչ մի պարագայում չի զիջի:

Սա իսկապէս անհասկանալի ու անտրամաբանական պահանջ էր, որովհետեւ ցանկացած բանակցութեան ժամանակ կողմերից իւրաքանչիւրը ձգտում է ոչ թէ ժամ առաջ բացել սեփական խաղաթղթերը, այլ ստիպել, որ դիմացինը բացի: Հիմա հարց՝ ինչո՞ւ են Հայաստանի ընդդիմադիր շրջանակները հիստերիկ տոնով պահանջում, որ Փաշինեանը դեռ բանակցութիւնները չսկսուած՝ հրապարակի հայկական կողմի «կարմիր գծերը»: Սերժ Սարգսեանը ժամանակին հրապարակեց դրանք՝ յայտարարելով, թէ մեր «կարմիր գծերը» սրանք են՝ Արցախը չպէտք է լինի Ադրբեյջանի կազմում եւ պիտի Հայաստանի հետ յուսալի ցամաքային կապ ունենայ: Այսինքն՝ յայտարարեց, որ «մեր հայրենիքը չէ» ոչ միայն Ադրբեյջանը, այլեւ Ֆիզուլին, Ջէբրայիլը, Ջանգելանը եւ այլն, որովհետեւ դրանք «Հայաստանի հետ յուսալի ցամաքային կապի» մաս չեն կազմում, հետեւաբար՝ կարելի է նաեւ

քննարկել դրանց վերադարձը: Եւ ինչ, հայկական կողմը որեւէ բան չահէ՞ց Սերժ Սարգսեանի այդ անկեղծացումից: Ծիշտ հակառակը՝ դա ոգեւորեց ադրբեյջանական կողմին, ու նրանք կոշտացրին իրենց դիրքորոշումը:

Ի դէպ՝ Փաշինեանի յայտարարութիւններին յաջորդած քարոզչական աղմուկից այնպիսի տպաւորութիւն է ստեղծուած, թէ վերջ, հարցը լուծուած է, մի օր առաւօտ արթնանալու ենք, տեսնենք նա գիշերը թաքուն յանձնել է տարածքները: Բայց չզիտես ինչո՞ւ՝ Ադրբեյջանում ճիշտ հակառակ տրամադրութիւններ են: Այնտեղ համարում են, որ Լաւրովի վերջին յայտարարութիւնից յետոյ հայկական կողմն ըստ էութեան կոշտացրել է դիրքորոշումը, եւ ակնյայտ է, որ Ադրբեյջանը բանակցութիւնների միջոցով ոչնչի չի հասնելու: Հետաքրքիր է՝ ամէն առիթով ադրբեյջանցիների կարծիքները սեփական քաղաքական նպատակների համար օգտագործող մեր ընդդիմադիրներն ինչո՞ւ աչա անգամ չեն նկատում սա:

Պատասխանն ակնյայտ է՝ որովհետեւ նրանց ոչ թէ բանակցային գործընթացն է հետաքրքրում, այլ այն, թէ որքանով կարելի է այդ գործընթացը ծառայեցնել սեփական քաղաքական շահերին: Մինչդեռ լաւ կը լինէր, որ քաղաքական ուժերն էլ իրենց հերթին հրապարակէին ներքաղաքական պայքարի «կարմիր գծերը», որոնք տրորել պարզապէս չի կարելի:

«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ
ՄՈՑԻԱԼ ՂԵՄՈԿՐԱՏ ԴՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ
ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՅԵ ԱՋԱՊԱՂՅԱՆ
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Լիլիթ Մակունց Նշեց «Իմ Քայլի» Երեք Պատգամաւորներու Հրաժարականի Պայմանը

Ազգային ժողովին, «Իմ Քայլը» խմբակցութեան ղեկավար՝ Լիլիթ Մակունցը խորհրդարանէն ներս ունեցած ելոյթի ժամանակ յայտնեց, որ Մայիս 8-ին խորհրդարանին մէջ տեղի ունեցած միջադէպը պէտք է ունենայ քաղաքական հետեւանք: Մակունցի խօսքով, Սասուն Միքայէլեան վար կը դնէ մանդատը կը հրաժարի իր իրաւագիրէն, եթէ վար դնէ եւ հրաժարի Լուսաւոր Հայաստան խմբակցութեան ղեկավար՝ Էտմոն Մարուքեան:



«Իմ Քայլը» խմբակցութեան ղեկավար Լիլիթ Մակունց

Մակունց նշեց, որ Ազգային ժողովին մէջ, ծեծկռտուքի օրը էտմոն Մարուքեան յարձակած է ու ոտքով հարուածած Սասուն Միքայէլեանը, այն պարագային, երբ Սասուն Միքայէլեան վտանգ էր ներկայացնէր, որովհետեւ ԲՀԿ (Բարգաւաճ Հայաստան կուսակցութեան) պատգամաւորները բռնած էին զինք: Եթէ իրօք ան բռնութեան դէմ է, ինչպէ՞ս կրնար նման բան ինք իրեն թոյլ տալ, հարց տուաւ Մակունց:

Մակունցը նշեց, որ իրենց մանդատը իրաւագիրներէն պատրաստ են վար դնելու հրաժարելու նաեւ «Իմ Քայլը» խմբակցութեան պատգամաւորներ Արտակ Մանուկեանն ու Վահէ Ղալումեանը, պայմանով, որ իրենց մանդատը վար կը դնեն նաեւ «Լուսաւոր Հայաստան»-էն պատգամաւորներ Հրանդ Այվազեանն ու Սարգիս Ալեքսանեանը:

Մակունցը ըսաւ, որ «Լուսաւոր Հայաստան»-ը պէտք է հաղնէս գալ արձագանքով եւ յայտնէ իր դիրքորոշման մասին:

«Լուսաւոր Հայաստանը զոհ չէ, ինչպէս իրենք փորձում են ներկայացնել: Լուսաւոր Հայաստան խմբակցութիւնը, ի դէմս իր ղեկավար էտմոն Մարուքեանի, բախումի կողմ է, աւելին, բախումը հրահրող կողմ է», - յայտարարեց Լիլիթ Մակունց:

Ան նշեց, որ զարմանալի է, որ խմբակցութեան ղեկավարը կարենայ բախումներ յառաջանողի դիրքով ու այդ բառամթերքով հանդէս գալ:

Ան օրինակներ բերաւ էտմոն Մարուքեանի յայտարարութիւններէն:

«Ես ուզում եմ լիչեցնել՝ ո՞վ էր այն պատգամաւորը, ով 2019 թուականի Յունուար 16-ին երդմնակալութեան արարողութիւնից երկու օր անց վէճ հրահրեց ԲՀԿ

(Բարգաւաճ Հայաստան կուսակցութիւն) խմբակցութեան հետ՝ Ազգային ժողովում, էտմոն Մարուքեանը: Ես ուզում եմ ձեզ հարցնել՝ ո՞վ էր այն պատգամաւորը, ով մօտ երկու շաբաթ առաջ՝ այստեղ կանգնած, ԱԺ պատգամաւոր Գէորգ Պապոյեանին պարբերաբար ընդհատում էր եւ ի վերջոյ հնչեցրեց սպառնալիք՝ ձայնդ կտրիւր, թէ չէ քթիցդ արիւն է գալու, էտմոն Մարուքեանը: Ո՞վ էր այն պատգամաւորը, որը Ռուբէն Ռուբինեանի՝ վարման կարգով ելոյթի ժամանակ խանգարեց Ռուբէն Ռուբինեանին՝ չթողնելով նրան խօսել եւ հրահրեց վէճ, էտմոն Մարուքեանը: Ո՞վ էր այն պատգամաւորը, ում Միլիթար Հայրապետեանը դիմում էր խնդրանքով՝ իրեն չընդհատել, խօսել դուք-ով, էտմոն Մարուքեանը: Ո՞վ էր այն պատգամաւորը, որը Սուրէն Գրիգորեանին դիմում էր՝ ո՞վ ես դու, արա ոճով, էտմոն Մարուքեանը: Ո՞վ էր այն պատգամաւորը, ով սեռական բնույթի հայհոյանք հնչեցրեց Ալեն Սիմոնեանի՝ ԱԺ փոխնախագահի հասցէին, էտմոն Մարուքեանը: Եւ ո՞ր խմբակցութեան ներկայացուցիչն էր Պաշտպանութեան յանձնաժողովի նիստի ժամանակ ասում՝ հեսա քֆուր կու տամ, Լուսաւոր Հայաստան խմբակցութեան ներկայացուցիչը: Եւ այսօր մենք ունենք իրավիճակ, երբ ԱԺ պատգամաւոր, ԼՀԿ (Լուսաւոր Հայաստան կուսակցութիւն) ղեկավարի եղբայրը շարունակում է սեռական բնույթի հայհոյանքներ հնչեցնելու այդ մշակոյթը մէկ այլ պատգամաւորի մօր հասցէին», - ըսաւ Լիլիթ Մակունց:

Կարէն Կարապետեան Ներկայացաւ Ապրիլեան Պատերազմի Քննիչ Յանձնաժողովի Նիստին

ՀՀ ազգային ժողովի Ապրիլեան պատերազմի հանգամանքները ուսումնասիրող քննիչ յանձնաժողովի նախագահ՝ Անդրանիկ Քոչարեան մանրամասնութիւններ ներկայացուց ՀՀ նախկին վարչապետ Կարէն Կարապետեանի մասնակցութեամբ տեղի ունեցած յանձնաժողովի նիստի մասին:

«Արմէնփրես»-ի փոխանցումով՝ Քոչարեանը նշեց, որ նիստի կարճ տեւելու պատճառներէն մէկը այն էր, որ Կարապետեան պաշտօնավարած է 2016 թուականի հոկտեմբերին:

«Նրան տրուած հարցերն առնչուել են սպառազինութեան ու թիկունքային ծառայութեան վերաբերելու իր կողմից արուած յայտարարութիւններին: Հարցեր են հնչել նաեւ այն մասին, թէ իր վարչապետութեան ժամանակ ինչ աշխատանքներ են կատարուել այս առնչութեամբ: Մենք ստացել ենք հարցերի պատասխաններն այնքանով, որբանով կարապետեանը պատասխանեց մեր կողմից հնչեցուած հարցերին», - ըսաւ Քոչարեան:

Յեղափոխութենէն Ետք Այս Իմ Ամենամեծ Պարտութիւնն Էր. Փաշինեան

Վարչապետ Նիկոլ Փաշինեան Մայիս 8-ի Ազգային ժողովին մէջ տեղի ունեցած ծեծկռտուքի վերաբերեալ, Ազգային ժողովի ամպլիննէն յայտարարութեամբ հանդէս եկաւ: Նիկոլ Փաշինեան դատապարտեց բռնութեան գործադրումը իր բոլոր դրսեւորումներով, որովհետեւ ըստ վարչապետին՝ բռնութիւնը ոչ միայն ֆիզիքական է, այլեւ բարոյական եւ հոգեբանական:

«Պէտք է ընդգծել, որ արդէն երկու տարի յեղափոխական կազմը հետեւողականօրէն եւ շարունակաբար ենթարկուած է բարոյական եւ հոգեբանական բռնութիւններին: Ներողութիւն եմ խնդրում ասելու համար, բայց խորհրդարանական մեծամասնութեան կրն պատգամաւորներին ընկերային ցանցերում սպառնում են բռնաբարել, նրանց երեխաներին փողոցներում սատակացնել, ամենավերջին ստահող, քստմնելի տեղեկութիւններ են տարածում պատգամաւորների վերաբերեալ, եւ այս ամէնն ունի մէկ նպատակ՝ խեղճացնել քաղաքական մեծամասնութեանը եւ քայքայել քաղաքական մեծամասնութեան եւ ժողովրդի միջեւ առկա վստահութիւնը», - յայտարարեց Նիկոլ Փաշինեան:

Վարչապետը յայտնեց, որ նախորդ օր, Ազգային ժողովին մէջ էտմոն Մարուքեանի հետ հանդիպման ընթացքին, պարոն Մարուքեանին ըսած է, որ հիմքեր ունին կասկածելու, որ ան եւ անոր գործունէութիւնը, հոգեբանական եւ բարոյական բռնութիւններ գործարկելու ծրագրի մը անբաժանելի մասն են:

«Դիտելով այսօր տեղի ունեցած միջադէպի տեսագրութիւնը, մի պարզ հարց եմ տալիս՝ իսկ ի՞նչ գործ ունէր ելոյթ ունեցող այնտեղ կանգնած եւ երբ որ ամպլիննից



Վարչապետ Նիկոլ Փաշինեան

իջնում էր եւ մեծ արագութեամբ ընթանում էր դէպի Սասուն Միքայէլեանը, ինչի՞ համար էր գնում, քաղաքական երկխօսութիւն ծաւալելու համար», - նկատել տուաւ Փաշինեան:

Նիկոլ Փաշինեան տեղի ունեցածը քստմնելի սաղրանք որակեց եւ դատապարտեց նաեւ այն, որ իրենք տեղի կու տան այդ սաղրանքներու պատճառաւ, որովհետեւ իրենք իրաւունք չունին սաղրանքներէն վրդովելու:

«Նրանք մեզ ուզում են մուտքերում իրենց ծեծողներ դարձնել, նրանք մեզ ուզում են հաւասարեցնել սպանողների, նրանք մեզ ուզում են շեղել մեր արժէքներից, նրանք մեզ ուզում են հանել հաւասարակշռութիւնից», - շեշտեց Նիկոլ Փաշինեան, ապա աւելցուց.

«Սա համարում եմ մեր եւ իմ ամենամեծ պարտութիւնը, որ ունեցել ենք յեղափոխութիւնից յետոյ: Բայց սա թող որեւէ մէկին չուսավառ չանի», - յայտարարեց վարչապետը ու արտասանեց յեղափոխութեան յայտնի երգին տողերը:

Արթուր Վանեցեան Յատուկ Քննչական Ծառայութիւն Հրաւիրուած է Միքայէլ Սինասեանի Յայտարարութեան Կապակցութեամբ

Ազգային Անվտանգութեան Ծառայութեան նախկին տնօրէն՝ Արթուր Վանեցեան հրաւիրուած է Յատուկ Քննչական Ծառայութիւն, Սուրբ Աթոռի մօտ նախկին դեսպան՝ Միքայէլ Մինասեանի յայտարարութեան կապակցութեամբ: Այս մասին ֆէյսպուքեան էջին վրայ գրառում ըրած է Վանեցեանի ներկայացուցիչ՝ Լուսինէ Սահակեան:

Յայտարարութեան մէջ, մասնաւորապէս, ըսուած է.

«Հայաստանի Հանրապետութեան Յատուկ Քննչական Ծառայութիւնում նիւթեր են նախապատրաստուում Միքայէլ Մինասեանի կողմից վերջերս արուած յայտարարութեան հետ կապուած: Այսօր նիւթերի նախապատրաստութեան շրջանակներում ՅԲԾ է հրաւիրուած եղել Արթուր Վանեցեանը: Ընթանում է իրաւական գործընթաց, որի վերաբերեալ չաւելյալ մեկնաբանութիւններից գերծ ենք մնում»:

NEWS.am-ի հետ զրոյցի ընթացքին, Արթուր Վանեցեանի փաստաբան Լուսինէ Սահակեան հաստատեց, որ Վանեցեան ՅԲԾ շատ կարճ մնացած է եւ արդէն դուրս եկած:

Նշենք, որ Սուրբ Աթոռի մօտ



ԱԱԾ նախկին տնօրէն՝ Արթուր Վանեցեան

նախկին դեսպան՝ Միքայէլ Մինասեան յայտարարած էր, որ վարչապետ Նիկոլ Փաշինեան Ազգային Անվտանգութեան Ծառայութեան նախկին տնօրէն Արթուր Վանեցեանի միջոցով իրեն գործարք առաջարկած է, որ իր դէմ քրէական հետապնդումը կը դադրի, եթէ վերջինը համաձայնի խորհրդանշական գումար փոխանցել ինչ, որ հիմնադրամի եւ քաղաքականութեամբ չբացառի: Միքայէլ Մինասեանի համաձայն՝ ինք այդ գործարքի առաջարկը մերժած է:

ԼՈՒՐԵՐ

Հայաստանի Եւ Արցախի Մէջ Նշուեցաւ Մայիսեան Եռատօնը



Հայաստանի Եւ Արցախի ղեկավարները կը մասնակցին եռատօնի միջոցառումներուն

Մայիս 9-ին, Հայաստանի Եւ Արցախի մէջ նշուեցաւ Մայիսեան Եռատօնը՝ Հայրենական մեծ պատերազմի յաղթանակի, Շուշիի ազատագրման Եւ Արցախի Պաշտպանութեան Բանակի կազմութեան օրերը:

Առաւօտեան Երեւանի «Յաղթանակ» զբօսայգի այցելեցին նախագահ Արմէն Սարգսեան, փոխվարչապետ Տիգրան Աւինեան, Ազգային ժողովի փոխնախագահ Ալեն Սիմոնեան, պաշտպանութեան նախարար Դաւիթ Տօնոյեան, Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ն, բարձրաստիճան պաշտօնեաներ, հոգեւորականներ ու պատերազմի վետերաններ, որոնք Յուշահամալիրի մօտ ծաղկեպսակներ գետեղեցին ու յարգանքի տուրք մատուցեցին գոհուածներու լիշատակին:

Նախագահ Արմէն Սարգսեանի օրուայ իր ուղերձին մէջ ըսաւ. «Յաղթանակը տարիք չունի Եւ երբեք չի ծերանում: 1992 թուականի այս օրը հայ ժողովրդի համախմբուած ջանքերով ազատագրուեց Շուշին: 75 տարի առաջ այս օրը Խորհրդային Միութեան ժողովուրդները միասնական յաղթանակ տարան Հայրենական մեծ պատերազմում»:

Երեւանի երկնքին տեղի ունեցաւ օդային շքերթ՝ հայկական օդուժի շարքերը վերջերս համալրած նոր Եւ արդիական կործանիչներու մասնակցութեամբ:

Վարչապետ Նիկոլ Փաշինեանն ու Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյեան առաւօտեան մեկնեցան Արցախ Եւ նախագահ Բակո Սահակեանի Եւ նորընտիր նախագահ Արայիկ Յարութիւնեանի ընկերակցութեամբ մասնակցեցան Յաղթանակի օրուայ առթիւ Ստեփանակերտի ու Շուշիի մէջ կազմակերպուած միջոցառումներուն:

«Մեր միասնական Եւ ազգային խնդիրն այն է, որ ամէն Մայիսի 9-ը Արցախում, Հայաստանում Եւ ընդհանրապէս հայու-

թեան շրջանում լինի առաւել տօնական, ապագային մեր հայեացքը լինի առաւել լաւատեսական, այսօրուայ մէջ լինենք առաւել վստահ, Եւ ես համոզուած եմ, որ այդպէս էլ կը լինի», - յայտարարեց Փաշինեան:

Հայաստանի վարչապետն նաեւ հանդէս եկաւ ուղերձով: «Հայ ժողովուրդը նշանակալից դերակատարում ունեցաւ Ֆաշիզմի արհաւիրքից եւրոպական ժողովուրդներին ազատելու գործում, Եւ որ Շուշիի ազատագրումն ազդարարեց Արցախի ազատագրման սկիզբը, Արցախի Հանրապետութեան ժողովրդի անվտանգութիւնն ու ինքնորոշման իրաւունքի իրացումը սակարկութեան առարկայ չեն, դրանք բացարձակ արժէքներ են մեզ համար»:

«Մենք ամբողջութեամբ վճարել ենք 20-րդ դարի բոլոր պատերազմների մեր պարտքը: Եւ հիմա, առաւել քան ուրիշ որեւէ մէկը, քաջ դիտակցում ենք խաղաղութեան արժէքը: Մեր ինքնութիւնը լաւագոյնս արտայայտուած է խաղաղութեան պայմաններում, ստեղծագործ Եւ կենարար աշխատանքի միջոցով: Միեւնոյն ժամանակ, իմանալով խաղաղութեան գինը, մենք միշտ պատրաստ ենք ամէն գնով պաշտպանել այն Եւ հարկ եղած դէպքում վերստին մարտնչել մեր ազատութեան Եւ արժանապատուութեան համար», - իր խօսքին մէջ ըսաւ վարչապետը:

Վարչապետ Փաշինեան տիկնոջ՝ Աննա Յակոբեանի հետ ժամանած էր Արցախ Եւ Ստեփանակերտի օդանավակայանին մէջ դիմաւորուած՝ Լեւոնային Ղարաբաղի գործող նախագահ Բակո Սահակեանի Եւ ընտրուած նախագահ Արայիկ Յարութիւնեանի ու անոնց տիկիներուն կողմէ:

Համավարակի պատճառով Հայաստանի ու Արցախի մէջ այս տարի տեղի չունեցան զանգուածային միջոցառումներ, բաւարարուելով պաշտօնականով:

«Նման Ցուցանիշ Որեւէ Երկիր Չէր Գրանցած». Երեւանի ԱՄՆ Դեսպանատան Յայտարարութիւնը

Երեւանի Ամերիկայի Միացեալ Նահանգներու դեսպանատունը յայտարարութիւն տարածած է.

«Երեւանում ԱՄՆ դեսպանատունը ուրախութեամբ արձանագրում է, որ ըստ Freedom House-ի անցումային ժողովրդավարութեան երկրների գեկոյցում, Հայաստանը գրանցել է ժողովրդավարութեան բարելավման ամենաբարձր երկամեայ ցուցանիշը, որպիսին այս գեկոյցի պատմութեան ընթացքում դեռեւս ոչ մի երկիր չէր գրանցել: USAID Armenia-ի հետ մեկտեղ մենք պատրաստ ենք աջակցել այն բարեփոխումներին, որոնք

Պոլսոյ Հայկական Եկեղեցւոյ Դէմ Կատարուած Ոտնձգութեան Հարցը Տեղափոխուած Է Թուրքիոյ Խորհրդարան

Թուրքիոյ ընդդիմադիր քրտամէտ «Ժողովուրդներու ժողովրդավարական» կուսակցութենէն (HDP) ընտրուած հայ պատգամաւոր Կարօ Փայլան հայկական եկեղեցւոյ վրայ կատարուած չարձակման հարցը տեղափոխած է երկրի խորհրդարան: Ան գրաւոր հարցում ներկայացուցած է Թուրքիոյ խորհրդարանի ուղղուած ներքին գործոց նախարար՝ Սուլէյման Սոյլուին: Այս մասին կը գրէ ermenihaber-ը:

Յիշեցնենք, որ Թուրքիոյ քաղաքացիներէն մէկը, Մայիս 8-ին, փորձած էր վառել Պոլսոյ Պաքըրքէոյ շրջանի Չէյթինլիք թաղամասի հայկական Ծնունդ Ս. Աստուածածնի եկեղեցւոյ դուռը: Բայց չէր յաջողած:

Փայլան ուշադրութեան յանձնած է այն փաստը, որ ձեռքաւորուած անձնաւորութիւնը իր խոստովանութեան մէջ, իր արարքի պատճառը նշած է հետեւեալը. «Որովտեւ «Քորոնա» ժահրը ասոնք (հայեր-խմբ.) բերած են»:

Հայ պատգամաւորը ընդգծած է նաեւ, որ ատելութեան մթնոլորտին մէջ, Պաքըրքէոյ Եւ տարբեր շրջաններու մէջ պարբերաբար եկեղեցիներու նկատմամբ ոտնձգութիւններ կը կատարուին: Նոյնիսկ ազգայնամոլական բնոյթի գրութիւններ տեղ գտած են հայկական եկեղեցիներու պատերուն վրայ:

Այս ամէնը նկատի առնելով Կարօ Փայլան Թուրքիոյ ներքին գործոց նախարար Սուլէյման Սոյլուին ուղղած է հետեւեալ հարցերը.

Չէ՞ք կարծեր, որ փոքրամաս-



Պոլսոյ Ս. Աստուածածնի եկեղեցւոյ դուռը, ուր կերելի վառելու փորձի հետքերը

նութիւններու կրօնական հաստատութիւններու հանդէպ ատելութեան հողի վրայ կատարուող չարձակումներուն վրայ ազդեցութիւն ունին Թուրքիոյ նախագահի կողմէ գործածուող խօսքերը, ինչպէս օրինակ՝ «Սուրի աւելցուկ» արտայայտութիւնը:

Ինչպիսի միջոցներ կը ձեռնարկէք յաճախակի չարձակման ենթակող փոքրամասնութիւններուն պատկանող կրօնական հաստատութիւնները պաշտպանելու համար:

Ըստ ինձի՝ ատելութեան հողի վրայ կատարուող այս չարձակումները ինչպէս նախապէս, այնպէս ալ հիմա, կ'ուղղորդուին պետութեան ներսը գտնուող տեսանելի կամ անտեսանելի կեդրոններու կողմէ: Հակառակը կրնա՞ք պնդել:

Նիկոլ Փաշինեան Զեռախօսագրոյց Ունեցած Է Զոռմի Պապի Հետ

Վարչապետ Նիկոլ Փաշինեան Մայիս 8-ին հեռախօսագրոյց ունեցած է Հռոմի Ֆրանչիսկոս Պապի հետ, կը յայտնեն վարչապետի աշխատակազմէն:

Վարչապետը շնորհակալութիւն յայտնած է «Քորոնա» ժահրի ընկերային-տնտեսական հետեւանքներու մեղմացման Եւ խոցելի խաւերուն օգնութիւն տրամադրելու հարցով Հռոմի Սրբազան եկեղեցւոյ Եւ անձամբ Ֆրանչիսկոս Պապի ջանքերուն համար Եւ ներկայացուցած է համավարակի դէմ ՀՀ կառավարութեան կողմէ ձեռնարկուող քայլերը:

Երկուստեք ընդգծուած է, այսօր աշխարհին մէջ խաղաղութիւն պահպանելը, սպառազինում դադարեցնելը Եւ ժողովուրդներու միջեւ խաղաղութեան մշակոյթի տարածումն ու խրախուսումը: Այս առումով վարչապետ Փաշինեան մեծապէս կարեւորած է Ֆրանչիսկոս Պապի անցեալ ամսուայ կատարած համընդհանուր գինադադարի կոչը, ներկայացուցած է Լեւոնային Ղարաբաղի հիմնախնդիր խաղաղ կարգաւորման Հայաստանի յանձնառութիւնը ու նաեւ երախտագիտութիւն յայտնած է Նորին Սրբութեան՝ հայ ժողովուրդի ու պատմական արդարութեան կողքին մշտապէս կանգնելու համար:

Նորին Սրբութիւնը շնորհաւորած է Նիկոլ Փաշինեանը՝ Հա-



Հռոմի Ֆրանչիսկոս Պապ

յաստանի Հանրապետութեան վարչապետ ընտրուելու երկրորդ տարին լրանալու կապակցութեամբ: Ան մեծ գոհունակութեամբ ընդգծած է Հռոմի կաթողիկէ Եւ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցիներու միջեւ գոյութիւն ունեցող եղբայրական յարաբերութիւններն ու անսասան կապը, վերահաստատած է իր դիրքորոշումը Հայոց ցեղասպանութեան հարցով:

Ջրուցակիցները բարձր գնահատած են հայ կաթողիկէ համայնքի դերակատարումը հայ ժողովուրդի կեանքին ներս: Երկուստեք ընդգծուած է երկկողմանի միջպետական յարաբերութիւններու ընդլայնման պատրաստակամութիւնը:

անհրաժեշտ են Հայաստանը ժողովրդավարութեան Եւ օրէնքի գերակայութեան ճանապարհով առաջ տանելու համար»:

Հայաստանի Մէջ Արտակարգ Դրութիւնը Կ'երկարաձգուի

Հայաստանի մէջ արձանագրուած է «Քորոնա» ժահրի մէկ օրուայ գրանցուած դէպքերու աննախադէպ բարձր թիւ՝ 180: Չորեքշաբթի կէսօրէ ետք շրջելով Երեւանի փողոցները, վարչապետ Նիկոլ Փաշինեան յայտարարեց, որ արտակարգ դրութեան երկարաձգումը անխուսափելի է, միայն թէ սահմանափակումներու ռեժիմը կը մեղմանայ:

Մարտ 16-էն սկսեալ կիրառուող արտակարգ դրութիւնը պէտք է աւարտել Հինգշաբթի Մայիս 14-ի՝ 17:00-ին, եւ երկարաձգուելու պարագային, Հայաստանը, փաստօրէն, թեւակոխելու է արտակարգ դրութեան երրորդ ամիսը:

«Արտակարգ դրութիւնը չչարունակելու տարբերակ չունենք մենք ուղղակի, բայց սահմանափակումների ռեժիմն ուրիշ կը լինի, աւելի մեղմ կը լինի: Այսօր առաւօտ խորհրդակցութիւն ենք ունեցել, թէ ինչ պէտք է անենք, պէտք է, այո, խստացնենք միջոցները՝ «Քորոնա» ժահրի պայմաններում բնականոն կեանքով ապրելու: Եթէ պարզուի, որ պէտք է դիմակ կրելը փակ տարածքներում պարտադիր լինի, պէտք է պարտադիր լինի: Բայց չենք կարող կիսատ կեանքով ապրել, պէտք է լիարժէք կեանքով ապրենք, ինչը չի նշանակում, որ պէտք է անկաշկանդ բոլորս վարակուենք եւ վարակենք ուրիշներին», - ըսաւ վարչապետը:

Հայաստանի մէջ, վարակուածներու ընդհանուր քանակը հասած է 3 հազար 718-ի: Նախորդ օր գրանցուած է մահուան եւս մէկ դէպք, հիւանդը 65 տարեկան տղամարդ էր, չէ ունեցած ուղեկցող քրոնիքական հիւանդութիւն: Մահացածներու ընդհանուր թիւը կը կազմէ 48, այսօր Ազատութեան փոխանցեց առողջապահութեան նախարարի մամուլի քարտուղար Ալինա Նիկողոսեան:

Հայաստանի Նախագահը Ստորագրեց

Շարունակուած էջ 1-էն բերեալ»:

Հանրապետութեան նախագահի աշխատակազմը արտայայտուած մտահոգութիւններն ու նկատառումները հանգամանալից եւ հետեւողականօրէն քննարկած է Ազգային ժողովի պետական-իրաւական մշտական յանձնաժողովի նախագահի ու արդարադատութեան նախարարի հետ եւ ստացած է պարզաբանումներ:

«Միեւնոյն ժամանակ ակնկալուում է, որ օրէնքը պէտք է կիրառուի ընդունման իրաւաչափ նպատակին խիստ համապատասխան՝ որպէս բացառիկ միջոց առանձնապէս բարձր հանրային վտանգաւորութիւն ունեցող յանցագործութիւնների դէմ պայքարելու համար»:

Լոս Անճելոսի Հայաստանի Հիւպատոսութեան

Շարունակուած էջ 1-էն

Հայաստանի վերադարձան ՀՀ 13 քաղաքացի, իսկ Մայիսի 9-ին՝ ՀՀ 21 քաղաքացի: Լոս Անճելոսում ՀՀ գլխաւոր հիւպատոսութիւնը, Հոլանտայի Թագաւորութիւնում ՀՀ դեսպանութեան հետ համագործակցութեամբ, օժանդակութիւն ցուցաբերեց Հայաստանի վերադարձող ՀՀ քաղաքացիներին՝

Մինչեւ հիմա մէկ օրուայ մէջ հաստատուած վարակակիրներու ամենամեծ թիւը Հայաստանի մէջ Մայիս 5-ին էր՝ 163 նոր դէպք.- «Այսօր ժամը 11-ի դրութեամբ ունենք հաստատուած «Քորոնա» ժահրային հիւանդութեան ընդհանուր 3 հազար 718 դէպք, որոնցից 1500-ն՝ առողջացած, 48-ը՝ մահուան ելքով: «Քորոնա» ժահրային հիւանդութեամբ այս պահին փաստացի բուժում է ստանում 2 հազար 149 հիւանդ, եւ եթէ հետազոտութիւններն էլ ասենք, ընդհանուր առմամբ կատարել ենք 34 հազար 766 հետազոտում: Եթէ օրուայ կտրուած քով թուերը հաստատենք, ապա ունեցել ենք հիւանդութեան հաստատուած 180 նոր դէպք եւ 70 առողջացածներ»:

Հարցին, թէ ինչու՞ պայմանաւորուած է այս մրցանիշային աճը, Ալինա Նիկողոսեան պատասխանեց.- «Հաստատուած դէպքերի հաղորդակիցներին այսպէս ասած՝ հետազոտումը մասնաշաղկապ է կատարուում, նրանք ընտանիքներ են, այսինքն՝ թիւը նաեւ դրանով է մեծ: Երկրորդը նա է, որ չեն պահպանուում շատ կանոնները, եւ դէպքերն աւելանում են, այսինքն՝ բացի այդ օջախներից, լինում են նաեւ արդէն առանձին դէպքեր, որ ուղղակի հետազոտուում են, ու ստացուում է, որ դրական է, բայց հիմնական թելը, որ գնում է մեզ մօտ, հաստատուած դէպքերի սերտ հաղորդակիցներն են, որոնք հետազոտուում են, յետոյ այդ սերտ հաղորդակիցների հաղորդակիցներն են հետազոտուում, ու այդպէս շղթայական դրական դէպքերը հաստատուում են»:

Այն, որ համաճարակի պայմաններուն անպատասխան կանոնները չեն պահպանուիր, առաւօտեան ֆէյսպուքեան ուղիղ հեռարձակման ժամանակ անդրադարձաւ նաեւ վարչապետ Նիկոլ Փաշինեան:

րելու համար: Օրէնքի անբարեխիղճ կիրառումը կարող է խաթարել պետութեան նկատմամբ վստահութիւնը եւ վտանգի տակ դնել դրա արդիւնաւէտութիւնը», - նշուած է նախագահի աշխատակազմի յայտարարութեան մէջ:

Արմէն Սարգսեան դեռեւս Փետրուար 6-ին դիմած էր Սահմանադրական դատարան, վիճարկելով «Հայաստանի Հանրապետութեան քրէական դատավարութեան օրէնագրում փոփոխութիւններ եւ լրացումներ կատարելու մասին» օրէնքի, ինչպէս նաեւ անոր հետ փոխկապակցուած «Դրամատնային գաղտնիքի մասին» օրէնքում լրացում կատարելու մասին» օրէնքի որոշ դրոյթներու սահմանադրականութիւնը: Դիմումի քննութիւնը նախատեսուած է Յունիս 16-ին:

լուծելով, մասնաւորապէս, նրանց ուղեբեռի եւ շենկենեան մուտքի արտոնագրերի հարցը: Լոս Անճելոսում ՀՀ գլխաւոր հիւպատոսութեան դիւանագէտները ներկայ են եղել Լոս Անճելոսի օդանաւակայանում՝ ՀՀ քաղաքացիների Հայաստան վերադարձի գործընթացը անխափան կազմակերպելու համար», - կը տեղեկացնեն հիւպատոսութեան:

Մահացած է Պանկլատեշ Բնակող Վերջին Հայը



«Ֆրանս Փրես» գործակալութիւնը կը հաղորդէ հարաւասիական Պանկլատեշ պետութիւն բնակող վերջին հայու՝ 89-ամեայ Մայքլ Ժոզեֆ Մարտինի (Միքայէլ Յովսէփ Մարտիրոսեան) մահուան մասին: Գործակալութեան հաղորդումով՝ Մարտիրոսեանը իր կեանքի ողջ ընթացքին հոգ կը տանէր Պանկլատեշի մայրաքաղաք՝ Տաքալի հայկական եկեղեցոյ եւ անոր յարող հայկական գերեզմանատան պահպանութեան մասին: Հայերը ներկայիս, Պանկլատեշի տարածքը առաջին անգամ բնակութիւն հաստատած են դեռեւս 16-րդ դարուն: Բրիտանական տիրապետութեան շրջանին, տեղի հայ համայնքը մեծ ազդեցութիւն ձեռք բերած է յատկապէս առեւտուրի ոլորտին մէջ: Եւ այս շրջանին ալ՝ 1781 թուականին, Տաքալի մէջ կառուցուած է Սուրբ Յարութեան հայկական տաճարը: «Միքայէլ Յովսէփ Մարտիրոսեանի մահով հայերու աւելի քան 300-ամեայ ներկայութիւնը կը մօտենայ է իր աւարտին», - կ'արձանագրէ «Ֆրանս Փրեսը»:

Նախագահ Թրամփը, Հայագի Փաթիք Յովակիմեանը Առաջադրած է ԱՄՆ-ի Ազգային Հետախուզութեան Տնօրէնի Գրասենեակի Գլխաւոր Խորհրդականի Պաշտօնին

Ամերիկայի Միացեալ Նահանգներու նախագահ՝ Տրամպի Թրամփը առաջադրած է հայ Փաթիքի Յովակիմեանը ԱՄՆ-ի Ազգային հետախուզութեան տնօրէնի գրասենեակի գլխաւոր խորհրդականի պաշտօնին: Միացեալ Նահանգներու Ազգային հետախուզութեան տնօրէնի պաշտօնն ու գրասենեակը ստեղծուած են 2004 թուականին, ձորճ Պուշ-կրտսերի նախագահութեան օրօք: Տնօրէնը, ըստ էութեան, կը համակարգէ, ամերիկեան հետախուզական եւ հակահետախուզական 16 գործակալութիւններու աշխատանքը եւ կը համարուի անոնց ղեկավարը: Այդ գործակալութիւններու կարգին կը դասուին Կեդրոնական հետախուզական գործակալ

ութիւնը՝ CIA, կամ Պաշտպանական նախարարութեան հետախուզական գործակալութիւնը՝ DIA-ը: Ամերիկայի Միացեալ Նահանգներու Ազգային հետախուզութեան տնօրէնի գրասենեակի գլխաւոր խորհրդականի պաշտօնին համար Փաթիքի Յովակիմեանի նշանակումը դեռ պէտք է հաստատուի Միացեալ Նահանգներու Մերակոյտի կողմէն: Գլխաւոր խորհրդականի ինդիքը, իրաւական հարցերով խորհրդատուութեան տրամադրումն է Ազգային հետախուզութեան տնօրէնի գրասենեակին, վստահ ըլլալու համար, որ գրասենեակի ենթակալութեան ներքոյ գործող պաշտօնեաներու աշխատանքը համահունչ է ամերիկեան օրէնքներուն:

Ապօրէն Ունեցուածքի Վերադարձը

Շարունակուած էջ 1-էն

գային: Խորհրդարանի որդեգրած օրինագիծը ունի նաեւ բաւականին զսպիչ սահմանափակումներ, թոյլ չտալու համար օրէնքի կամայական կիրառումը: Դատախազութիւնը չի կրնար առանց պատճառի հետաքրքրուիլ քաղաքացիներու եկամուտներու եւ ունեցուածքի տարբերութեամբ: Այդ կրնայ կատարուիլ միայն երբ տուեալ անձի նկատմամբ կայ կոռուպցիայի մէջ ներգրաւուած ըլլալու մեղադրանք եւ կամ հետախուզութեամբ ի յայտ կու գան մանկ կասկածներ: Օրէնքը կը տարածուի 1991 թուականի Սեպտեմբեր 21-էն սկսեալ բոլոր նախկին եւ ներկայ պաշտօնեաներուն վրայ: Այս օրերուն խուճապի մատն-

ուած են յատկապէս վերջին քսան տարիներուն, նախկին իշխանութիւններու օրով, պետութեան կալուածներն ու հողեր ջնջիմ գումարներով ձեռք ձգած անձիք, որոնք իրենց քարոզչական մեքենան կ'օգտագործեն որպէս գի օրէնքը կեանքի չկոչուի: Նմանները պատրաստ չեն հեշտութեամբ վերադարձնելու իրենց ունեցուածքը: Միւս կողմէ, թաշտայ յեղափոխութեան գլխաւոր օրակարգերն մին հանդիսացող այս պահանջի ձգձգումը սկսած էր յառաջացնել ժողովրդային դժգոհութիւն: Ապօրէն ունեցուածքի բռնագրաւումի մասին օրէնքի ընդունումը առաջին քայլ է երկրէն ներս ընկերային բեւեռացումը մեղմելու եւ արդարութիւնը վերականգնելու ճանապարհին: «ՄԱՍԻՍ»

Ղոզանցները Յաղթանակի՝



Շուշիի ազատագրութեան գործողութիւնը, մեր ժամանակակից պատմութեան ամենափայլուն էջը կը կազմէ: Ռազմական հմուտ մարտավարութեամբ, զիպուկ եւ կտրուկ հարուածներով, Արցախի սիրտը հանդիսացող Շուշիի վրայ խոջանքն ու անոր անառիկ բարձունքին նուաճումը, էպպէս շրջեցին դարաբաղեան հակամարտութեան ռազմական իրավիճակն ու հոգեբանական պատկերը:

Եթէ վերջիշէնք մեր տարբեր հերոսամարտերուն եւ դիւցազնական ճակատամարտերուն պատմութիւնը, կրնանք իսկոյն նշմարել, որ անոնք եղած են ինքնապաշտպանութիւններ, նախապարձակ ոտխար կասեցնելու կամ սանձելու երբեմն յուսահատ գուպարներ: Սակայն, 1992 Մայիս 9-ի Շուշիի նուաճման եւ աւելի ուշ Արցախի յարակից տարածքներու ազատագրութեան փաստը կը նշանակորուի անով՝ որ այս անգամ հայկական ուժեր, զմայլելի հերոսականութեամբ եւ անընկճելի ոգորումներով կարողացան արտաքսելով թշնամին, վերատիրանալ նախնեաց հողերուն. այդպիսով՝ պահ մը ջնջելով մեր նախկին դառնադի յիշողութիւնները ու սակաւ մը ամոքելով մեր խոր սպիները: Շուշիի յաղթանակով, արդարօրէն ուռեցաւ հայ մարդուն արիաշունչ կուրծքը, կենդանացաւ որձութեան զգացումն ու բորբոքեցան ըջիջները խիզախութեան:

Շուշին սովորական քաղաք մը չէ մեր պատմութեան մէջ: Ժամանակին, Արեւելեան Հայաստանի ամենահայաշատ քաղաքն էր ան: Գրականութեան, մշակութային կեանքի, կրթութեան, արուեստի հայատրոփ կեդրոն մըն էր, որուն փողոցներէն եւ կրթօճախներէն, բեմերէն եւ լսարաններէն անցած են բազմաթիւ կարկառուն դէմքեր, պետական-քաղաքական ու ռազմական գործիչներ:

Արցախի շուրջ ծաւալած ռազմական գործողութիւնները արձանագրեցին յաջորդական փուլեր՝ մինչեւ 1994 Մայիս 12, երբ հակառակորդը իր կրած անփառունակ պարտութիւններէն յուսաբեկ, նոր խայտառակութիւններէ խուսափելու մտօք, թախանձագին հրադար մը խնդրեց, նոյնինքն դարաբաղեան իշխանութիւններէն (Պիշքէքի հրադարար անունով ծանօթ): Ի միջի այլոց, շրջան մը (1992-1993 թ.) ակնբախ յաջողութիւններ Պաքուի իշխանաւորները դարձուցած էին գոռոզամիտ, անոնց նախագահը սկսած էր փայփայել երազ մը՝ Շուշիի մէջ թէյ համտեսելու սուր ախորժակով: Աւելի

ուշ, պատրանախաբ դարձած՝ ագերիներ արդէն սկսած էին ըմպել պարտութիւններու լեղի բաժակը խոճալուի (այժմ Իւանեան), Շուշիի եւ Լաչինի (այժմ Բերձոր) մաքրագործումներով: Այդ շարանին ամենաուշագրաւ օղակը Շուշիի առումն էր անկասկած, երբ Ղազանչեցոց Սբ. Ամենափրկիչ եկեղեցուց ղոդանջները 1992 Մայիս 9-ին, ի լուր աշխարհին կը յայտնէին հայոց յաղթանակին աւետիսը:

Շուշիի ազատագրութիւնը անհրաժեշտութիւն էր, որովհետեւ այդ գերիշխող դիրքէն թշնամին իր հսկողութեան տակ կը պահէր մայրաքաղաք Ստեփանակերտը, կը խափանէր հայոց ազատ տեղաշարժը եւ սեպի նման խրած Արցախի կողին՝ ռաբահարումներով կ'արգելակէր քաղաքացիներուն բնականոն կեանքը: Թէպէտ անկարելի թուացող, բայց իրականութիւն դարձած այս հմուտ գործողութիւնը ունէր երկու մեկնակէտ՝ փորձառու գինուորականներու մշակուած ծրագիրը եւ ոգեկան բարձր պատրաստակամութիւն:

Ահա այստեղ իրենց պատմակերտիչ դերը ստանձնեցին Վազգէն Սարգսեանն ու Արկաղի Տէր-Թադէոսեանը (Քոմանտօս), իրենց կողքին ունենալով գործին ատակ եւ նուիրեալ հոյ մը բանակայիններ Գուրգէն Տալիպալթայեան, Մէյրան Օհանեան, Սամուէլ Բաբայեան, Սամուէլ Կարապետեան, Լէոնիտ Մարտիրոսով, Յուրի Յովհաննիսեան, Աշոտ Ղուլեան (Բեկոր), Վալերի Չիթչեան եւ ուրիշներ:

Ոմանք այս յանդուգն արշաւը պիտի կոչէին «մահու կենաց» խոյանք: Բայց, ո՛չ: Միայն ու միայն՝ կենուն կենաց: Եւ այդ ոգեկան ուժն էր որ մարտիկները մղեց մարտադաշտ նետուելու հարսանեկան տրամադրութեամբ՝ գործողութիւնը կոչելով՝ «Հարսանիք Լեռներում»: Ահա անոր հրամանատարներէն մէկուն՝ Սամուէլ Կարապետեանի պատմածը՝ «Ստացանք գրոհի հրամանը: Իմ դասակը 50 հոգուց էր բաղկացած: Շատ ցանկացողներ կային, բայց ընտրեցինք ամենամարտունակներին, լաւ գիտէինք, թէ ուր ենք գնում: Վճռորոշ, ճակատագրական մարտ էր, եւ ոչ ոքի մտքով չէր անցնում, թէ կարող ենք յանկարծ ձախողուէք: Գնում էինք մի դաժան հրճուանքով. մեռնել յանուն Շուշիի՝ դա պատիւ էր բոլորիս համարը:

Շուշիի ազատագրութիւնը անկրկնադարձային նշանակութիւն ունէր նաեւ անոր համար, որ դարա-

Շուշիի Գեղացու Գործընդ

ԳՐԻԳՈՐ ԶԱՆԻԿԵԱՆ

Աջափնեակի «բնօրրան» ջոկատի հրամանատարը՝ Նոյ Ակնունին, որքան յիշում էր, խորովածանոցում ինքն էր, վարորդը՝ Վրէժը, որ մարտի դաշտում մենակ վարորդ չէր, թիկնապահը, համհարզը, յանձնակատարը, ամէն ինչն էր, Չապլինը (տափակ ու անհամ կատակելու, ընկերներին ծաղրանմանակելու համար Գեղամը դեռեւս Մարտակերտը չազատագրած Չապլին դարձաւ), ԱՍԱԱ-ի ժիրոն, մէկ էլ ձուտօն, որ այն տարիներին անի՞ց, թէ՛ դասերից էր փախել, Արցախում իրենց միացել: Ինքն, ի հարկէ, նրան վերցնել չուզեց, բայց ձուտօն (այն ժամանակ դեռ անունը Հայկազ՝ Հայկօ էր) անսպասելի Գեղամի ինքնաձիգը խլեց, կրծքին դէմ արեց, թէ՛ հետ ուղարկէք, ինքնասպանութիւն եմ գործելու, խղճներդ խայթ է լինելու...:

Խորովածանոցում էր քանն էին, ուրիշ ո՞վ պիտի լինէր, մնացածը չկային, գոհուել էին: Հա, ուշացումով Հայրենասէր Հայկն էլ միացաւ, ում, տարիներ առաջ, օպերայի հրապարակում արձանագրելիս, երբ հարցրեց՝ թէ ինչո՞ւ է ծպտանունը «հայրենասէր», նա լուեց, սղալեց սասունցու, թերեւս մշեցու ոլոր ընչացքները, թէք իրեն նայեց, այսինքն՝ «հրամանատար, չե՞ս տեսնում, որ հայրենասէր եմ»...:

Այն պատճառով, որ Շուշիի ազատագրութեան հերթական տօնին՝ աւելի ճիշտ՝ յոբելեանին, իրենց ջոկատը յիշել, հրաւիրել, բանի տեղ էին դրել, մի բաժակը դարձրին երկու, երկուսը՝ երեք, չորս, յետոյ, ինչպէս միշտ, սկսեցին իրար խանգարելով վերջիշէլ բերդամրոցն ազատագրելու մանրամասները: Կարծես միասին չէին եղել: Որքան տարիներն անցնում, այնքան երեւակայական երանգներով գունաւորում՝ ասել է թէ կարօտով էին յիշում այն պահը, երբ Նոյը հրասայլերն էլ էր ետեւում թողել, վճռել էր առաջինը քաղաք մտնել: Նա դեռեւս ջոկատի հրամանատար չէր, ջահէլ, մահ չտեսած ազատամարտիկ էր, փշփշոտ մացառուաներից քրքրուելով, քրտնելով, անսպասելի յայտնուեց Ամենափրկչի զանգակատան գաւիթում ու յուսախաբ կանգ առաւ: Շշմել էր: Եկեղեցու շուրջն իրենից առաջ հայկական համարանիշներով գինուորական ինքնաշարժեր էին հասել, կողք-կողքի կառանուել: Բոլորովին նոր, չփոշոտուած համազգեստով ոչ այնքան ջահէլ տղամարդիկ, որոնք հաստատ այդ ինքնաշարժերից էին դուրս եկել, գինապահեստ դարձած եկեղեցու պատերին մոմ էին վառում: Որտեղից որտեղ դժուր-գուռնայ յայտնուեց, երեւի հետներն էին բերել, նրանք շրջան կազմեցին, քոչարի պարեցին՝ այնպէս, որ լուսանկարող ու նկարահանող

սարքերը հասցնեն, պատմական պահը յաւերժացնեն: Նոյը, որ կարծել էր առաջինն է Շուշի մտել ու մինչեւ Ամենափրկչի հասնելը գրեթէ հաւատացած էր եղել, այլայլուեց: Մի կողմ գնաց, որ միգի ու ազատագրութեան բեմականացումը չտեսնի, բերդամրոցի ամենաբարձր աշտարակին Ադրբեջանի դրօշը նկատեց: Կանաչ կիսալուսինը դեռ չգիտէր, թէ գլխին ինչ է եկել, ինքնագոհ փողփողում էր: Նոյին թուաց, թէ այդ դրօշն է իրեն համակած դառնութեան, յուսախաբութեան պատճառը: Նայեց այս ու այն կողմ՝ Աջափնեակի իրենց «բնօրրան» ջոկատի տղաներից ոչ ոք չկար: Ինքնաձիգը թիկունքին նետեց, սկսեց պարապով վեր մալցել: Մատները Շուշի քարակարկառները յաղթահարելիս քերծուել, արիւնտուել էին, լարուածութիւնից դողդողում, բայց ենթարկուած էին: Հասաւ աշտարակին՝ ձեռքը դրօշին գցեց: Ադրբեջանցիները երկաթգամերով ամրացրել էին, որ քամին չպոկի: Ձողը փայտից էր, ջարդեց, չիմացաւ ինչ անել: Ուզում էր կիրճը շարժել, միտքը փոխեց: Ինքնաձիգից փամփուշտ հանեց, հրանիւթը կարծր քաթանի վրայ ցանցնեց, կրակվառիչով բռնկեցրեց: Նախ վառօղից գունաւոր կայծեր ցայտեցին, յետոյ դրօշը միաց ու վերջապէս սկսեց այրուել: Ոտքի կանգնեց, գլխավերեւում պտտեցրեց այն քան, մինչեւ ածխացաւ, գրահաբաճկոնի վրայ մոխիր թափուեց: Մէկ էլ անունը լսեց: Յաճ նայեց, տեսաւ ձուտօն, էն մի մատ ձուտօն, որ առաջին ճակատամարտի ժամանակ վախից տակն արեց ու ամօթից լաց եղաւ, ուզում էր հետեւից բարձրանալ, բայց կիսաուրեքերը երեւի մաշուած էին, արթնքները երեւի մաշուած էին, կայթնում էր: Համոզուեց, որ չի կարողանալու Նոյին հասնել, մի ձող մեկնեց՝

-Տղերքն ուղարկեցին,- գոռաց: Բերան քսիվայր պառկեց, ձեռքը մեկնեց, վերցրեց: Նորից բարձրացաւ այն աշտարակը, որտեղ այրել էր ադրբեջանական դրօշը, իրեն պարզուած ձողը ամրացրեց: Կտաւը բացուեց, Եռագոյնը աղաւնու թեւերի պէս լայն փուփուաց, ձախրեց: Բերդամրոցում անմիջապէս խաղաղ հանդարտութիւն իջաւ, Շուշիի շրջակայ բլրաշարերը երկինք ձգուեցին, հաւասարուեցին Արարատին:

Նոյը դէպի հորիզոնը շրջուեց, տեսաւ ազատագրուած Արցախը: Նախիջլեանը: Արեւմտեան Հայաստանը: Իր ազատ, անկախ, միացեալ Հայրենիքը:

* * *

-Հրամանատար, ինչ՞ի ես լալիս,- բաժակը օղի էր լցնում, հոգատար հարցնում էր ձուտոն, որ, պատերազմը վաղուց էր աւարտուել, բայց ինքնաձիգը չէր յանձնել...:

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ԸԱՍԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՍԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
(626) 797-7680

Հայաստանի Եւ Արցախի Մէջ Նշուեցաւ Մայիսեան Եռատօնը



PRESS OFFICE OF THE GOVERNMENT OF ARMENIA
www.gov.am

Պատմութեան Զամար Ամերիկահայ Մայր Աթոռի Եւ Կիլիկեան Թեմերու Միջեւ Բանակցութիւններ (1970-1990)

ՂԿՏ. ԶԱԻՆ Ա. ՔՅՆՅ.
ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

Ամերիկահայ Թեմի Զարիւրամեակը


1998 թուին Ամերիկահայ Թեմի հաստատման 100-ամեակն էր եւ երջանիկ երազ մը կրնար իրականանալ որ Ամերիկահայ երկու թեմերը միանային Ս. Վարդան Մայր Տաճարին մէջ կատարուելիք յոբելինական հանդիսութեանց բարեպատեհ առիթով՝ նախագահութեամբ Տ.Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսին որ Նիւ Եորք ժամանած էր այդ առիթով: Գարեգին Կաթողիկոս սկիզբի օրերէն բաժանումին գլխաւոր դերակատարներէն մին ըլլալով որպէս միաբան ու նախկին առաջնորդը Ամերիկայի անջատեալ թեմին, եւ ապա Կիլիկիոյ Կաթողիկոսը, շատ լաւ գիտնալով կացութիւնը մէկ Աթոռէն միւս Աթոռը անցաւ, ձգելով այն սպաւորութիւնը թէ հեղինակութիւնը կ'ունենար միջամտելու, ինք իսկ գիտնալով որ նոյն երազը պիտի կրկնուէր: Յիւրախ ամենէն լաւ առիթն էր Հարիւրամեակի այդ տարին, երբ Կիլիկիոյ Կաթողիկոսին ներկայութեամբ իսկ երկուստեք յայտարարէին երջանիկ լուրը, սակայն այդ եւս պիտի ըլլար երրորդն ու վերջինը երազներու շարքին, բոլորիս շատ յայտնի պատճառներով:

Յանձնախումբերու Կազմութիւնը

Հայ Եկեղեցւոյ կանոնական կառոյցին հակառակ Ամերիկահայ Թեմի կողքին 1957 թուականէն սկսեալ գոյութեան եկած է Կիլիկեան Թեմը՝ Անթիլիասի իրաւասութեան ներքեւ, հակառակ Մայր Աթոռի գիտութեան եւ Երջանկալիչատակ Տ.Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի կամքին: Թեմը եւս ապարդիւն եւ ժամանակավրէպ նկատուի ներկայ գրութիւնը, սակայն Ամերիկահայ Թեմի պատմութեան համար ուսանելի կը գտնեմ զայն, անձնապէս որպէս մասնակից եւ գործակից ըլլալով կատարուած քսան տարիներու աշխատանքին: Նոյն շրջանին ութ տարիներ, երկու շրջանի համար, անդամ էի Արեւելեան Թեմի Թեմական Խորհուրդին ստանձնելով ատենադպրի պաշտօնը՝ Թորոնթո Արքեպիսկոպոս Մանուկեանի առաջնորդութեան շրջանին: 1968 ապրիլ 26-ին, երբ Ամենայն Հայոց Կաթողիկոսը օժոնմը կատարեց Նիւ Եորքի Ս. Վարդան Մայր Տաճարին, պատեհ առիթը ընծայուեցաւ որ Հայրապետի արտօնութեամբ բանակցութիւններ սկսէին Մայր Աթոռի եւ Կիլիկեան Թեմերու միջեւ միայն թեմական մակարդակի վրայ, միակ նպատակ ունենալով միացնելու Ամերիկահայ Թեմը իրաւասութեանը ներքեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան ի Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

Երկարամեայ Բանակցութիւններ

Երկուստեք գոյացած համաձայնութեամբ երկարամեայ բանակցութիւններ սկսան թեմերու ներկայացուցչական յանձնախումբերու կողմէ որոնք տեւեցին ուղիղ քսան տարիներ, 1970-1990, եւ սակայն յանգեցան ապարդիւն վարձանի: Հարկ է անմիջապէս հաստատել որ երկուստեք նշանակուած




իննական անդամներու յարատեւ աշխատանքը գլխաւոր մասամբ եղաւ անկեղծ, ուղիղ, սրտբաց եւ սրտցաւ, երբ երկու յանձնախումբերը տրամադրեցին անդուլ աշխատանք եւ անհաշիւ ժամանակ օրինաւորապէս որոնելու ուղիներ ու արահետներ, յուսալով որ օր մը Ամերիկահայ Թեմն ու նորակազմ Կիլիկիոյ Թեմը կրնային միանալ: Վերապահումներ, թերահաւատութիւններ եւ երբեմն ալ իսկական խոչնդոտներ յաճախ ձգձգեցին ժողովներու արդիւնաւոր գումարումները, քանի որ առնուելիք քայլերը ի վերջոյ պիտի ենթարկուէին եկեղեցական կեդրոններուն՝ Մայր Աթոռի եւ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան:

Այդ օրերուն որպէս 1956 թուի տագնապի օրերու վկաններէն մին եւ միաբան Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, անձնապէս կը զգուշացնէի ժողովականները որ նման բանակցութիւններ ժամավաճառութիւն պիտի ըլլային ու մնային ապարդիւն, եւ սակայն «փորձ մըն է որուն կ'արժէ ընթացք տալ» կ'ըսէին: Եւ այդ փորձը եղաւ: Առաջին քայլերը առնուեցան երբ Թեմի Առաջնորդ Թորոնթո Արքեպիսկոպոս Թեմական Խորհուրդի անունով 1969 Սեպտեմբեր 16 թուակիր նամակով տեղեկացուց Կիլիկեան Թեմի Առաջնորդ Հրանդ Արքեպիսկոպոս Խաչատուրեանին ինը հոգինոց յատուկ յանձնախումբը կազմել: Ամիսներ ետք 1970 Մայիս 18 թուակիր նամակով վերջապէս հաստատեցին իրենց անդամները:

Ժողովներու Գումարում

Չոյզ յանձնախումբերը առաջին ժողովը գումարեցին եօթնական անդամներու մասնակցութեամբ եւ համաձայնեցան հիմնական եւ անառարկելի երկու պայմաններուն վրայ որոնք կարելի պիտի դարձնէին յառաջացնել բանակցութիւնները: Անոնք էին, առաջին, Ամերիկայի առաջնորդութիւնը ենթակայ կը մնայ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան ի Մայր Աթոռ, եւ երկրորդ, Թեմը կ'ունենայ միակ կեդրոնական առաջնորդարան մը, մէկ առաջնորդով որ ինքնին ենթակայ պիտի ըլլայ Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Երկրորդ ժողովին սակայն Կիլիկեան Թեմի անդամները ետ քաշուեցան պատասխանատու որոշումներ առնել, առարկելով որ չիշեալ սկզբունքները հարկ էր «վերին մարմիններու կողմէ ընդունելի դարձնել»: Անցան ամիսներ եւ Ամերիկահայ Թեմի ներկայացուցիչները վերատեսուեցան ենթարկելով առարկելի կէտերը, աւելի նպաստաւոր դարձուցին ընթացքը: Սակայն այս եւս երկար չտեւեց եւ



մինչեւ 1972-ի վերջը ժողովները դադարեցան: Կրկին Ամերիկահայ օրինաւոր Թեմի ներկայացուցիչները համաձայնաբար կարողացան օրինագիծ-ուղեցույց մը պատրաստել զայն ենթարկելու համար երկու թեմական ժողովներուն:

Օրինագիծ-Ուղեցույցը

1973 Ապրիլ 12-ի նիստին Ամերիկահայ Թեմի Թեմական Խորհուրդը քննել է թելադրութիւններ կատարելէ ետք, յանձնարարեց իր յանձնախումբին զայն անգամ մը եւս բերելու միացեալ ժողովին ու միասնաբար ընդունելու ուղեգիծ մը որ զրկուեցաւ նաեւ Կիլիկեան Թեմին, նոյնը հոն եւս կատարելու համար, ուրկէ սակայն Օգոստոս 20 թուակիր նամակով բանակցութեանց յետաձգում առաջարկուեցաւ, պատճառաբանելով իրենց նորընտիր առաջնորդ Գարեգին Արքեպիսկոպոս Մարգարեանի ժամանումը:

Ի՞նչ կ'ուզէ թող խօսի մեր նախագահը, Ֆրանսան, Իտալիան, Անգլիան, Ռուսաստանը աչքիս առջեւն են, վարակուող հազարներն ու մահացողներու թիւերը՝ նոյնպէս:

Ի՞նչ կ'ուզէ թող ըսէ նախագահը, ես ոգնիս նետած զգուշացման փուշերուն կը հաւատամ:

-Դ-

Աքլորակուիւ

Վիրաւորուած եւ բարկացած բջջայինս շարտեցի բազմոցին: Բարեբախտաբար բազմոցին նստած էի, այլապէս պիտի կորսնցնէի իմ «նոր խաղալիքս»՝ ամենագէտ բջջային «այփատոս»: Դուն մի՛ ըսեր, խանգարեր եմ քունը խեղճ ոգնիս, որ այդ ժամուն որոշեր է բազմոցին տակը քնանալ:

- Ի՞նչ եղաւ քեզի, տէ՛ր իմ. վախցայ բան մը պատահեցաւ,- ըսաւ սփրթնած (վախէն գոյնը նետած) ընկերս:

- Ի՞նչ պատահեց է?, ի՞նչ պիտի պատահի, Հայաստանի Ազգային ժողովին մէջ կուիւ մը փրթեր է. ամօթէս գետինը մտայ,- ըսի դողդղացող մարմնով:

- Տուր է՛ս ալ նայիմ, ես հայերու կուիւ չեմ տեսած,- ըսաւ ու սուր քիթիկով գործիքիս դպնալն ու հարայ-հորոցի աղմուկի բարձրանալը մէկ եղաւ:

Մէջ մըն ալ ի՛նչ տեսնեմ, աղէկ, ոգնիս խնդալէն կը մարի եւ ուրախութենէն վեր վեր կը ցատքի:

- Տէ՛ր իմ, ասիկա իսկական աքլորակուիւ է, որուն յաճախ կը հանդիպիմ դրացիին հաւնոցին մէջ. ես աւելի հաւաւորները տեսած եմ թուրքիոյ, Քորէայի եւ այլ խորհրդարաններու մէջ: Ասիկա սովորական բան մըն է, ի՞նչ կայ այսքան վրդովուելու...:

Այո՛, ի՞նչ պէտք կար սիրտս ալեկոծելու, երբ քիչ ետք աւելի սրտխառնուք յառաջացնող հարցազրոյց մը պիտի դիտէի «ամենայն հայոց պատգամաւորութիւն», որ կոչի Նայիրա Չոհրապետան, եւ եկայ հետեւեալ եզրակացութեան՝ այս կիրն պիտի չփոխուի. պակաս կուուզան մըն ալ չէ ինք:

Ինչե՞ր ըսաւ մեր «ամենայն հայոց պատգամաւորը», յայտնի է որ ձայնը տաքուկ տեղէ կու գար, թիկունքը պինդ է եւ թացը չորէն չի կրնար զանազանել կամ գործին չի գար զանազանել:

«Սրտցաւութեամբ խօսեցաւ եւ չմոռցաւ խալթոց մըն ալ դրկել վարչապետին եւ իր համախոհներուն: Ամօ՞թ զգացեր հայ տղամարդկանց «տղամարդավարի» վարմունքին պատճառով: Յետոյ սկսաւ լեզուին ուժ տալ. ինչե՞ր ըսաւ:

Ինչպէ՞ս չբարկանամ, երբ ոգնիս ալ ձայնակցեցաւ ինձի ու փուշերը տնկեց, աջ ու ձախ սկսաւ պտրտիլ: Հաստատ կրնամ ըսել Նայիրան կը փնտնէր: Հասկցայ իր միտքը, գոր թարգմանեցի այսպէս. «դուք ալ, չարգելի ՀՀ Աժ պատգամաւոր, որ ճշմարտախօսի քղամիտ հազած, նորէն առիթը չէք փախցնել այս իշխանութեան հասցէին ոչ-առարկայական ու չհիմնաւորուած, այլեւ վատ մտածուած դատումներ կատարել: «Բժի՛շկ, բժշկեա զանձն քո»: Ձեր ելուցթը հասկնալու լուրջ դժուարութիւններ ունեցան տակաւին հայերէն խօսող սփիւռքահայեր. այդ պատճառով օրական տասնեակներով հեռախօսազանգեր կը ստանայ տէրս, որպէսզի հայերէնի թարգմանէ՛ ձեր զազրաբարբառ ու այլանդակուած հայերէնը»:

(Շարունակելի)

Pasadena Unified School District
Armenian Dual Language Immersion
High School Program. (DLIP)
The program will be located at Blair School, home to PUSD's International Baccalaureate programs.

Register Now!

2020-2021 Registration for the Armenian Dual Language Immersion High School Program at Blair is now open!

Armenian Dual Language Immersion Program

PASADENA UNIFIED SCHOOL DISTRICT
 Our Children. Learning Today. Leading Tomorrow.

626-396-3606
 openenrollment.info

Բառերու Խորհրդաւոր Աշխարհը 397 Աղաւնի

ՆՈՐԱՅՐ ՏԱՏՈՒՐԵԱՆ

Օրհնութիւն տանք
 հայ ազգի աղաւնի դարձած
 նահատակներուն,
 Օրհնութիւն տանք
 աղաւնատիպ եւ աղաւնաբա-
 րոյ հայ գրիչներուն,
 Դառնանք եւ օրհնութիւն
 չտանք
 աղաւնասպան եւ աղաւնեկո-
 տոր զազաններուն,
 Օրհնութիւն տանք
 աւերակ գիւղի աւերակ վան-
 քին որպէս աղաւնի վերադարձած
 հայերուն:

Երբ հայկական Ապրիլն էր, տասնմէկ ամիսներու իշխանուհին, յարգելի ընթերցող, յարմար տեսեր էի գրուցել ապրելու եւ կեանքը լիովին վայելելու փափաքի մասին՝ «Ժպիտ» բառն էր մեր հիւրը: Բայց ուշ էր եղած, որ հասկնալինք, թէ հայոց լեզուի բարեժպիտ, քաղցրաժպիտ եւ գեղեցկաժպիտ դէմքերը դարձեր էին աղաւնիներ՝ անմեղ զոհեր: Ուստի, այսօր, խօսիլ աղաւնիէ բառի մասին, կը նշանակէ խօսիլ հայաբարոյ արժէքներու եւ յաւերժական դարձած գրական յորինումներու մասին:

Անտոյզ է «աղաւնի»ի ծագումը: Սակայն, ան մեր ազգի արշալոյսի օրերէն իսկ սկսեր է բոյն դնել հայոց մայրենիի մէջ, ինչպէս սպիտակ եւ մոխրագոյն աղաւնիներ սիրած են բոյն դնել հայկական լեռնաշխարհի քարանձաւներու, ժայռերու, խորշերու մէջ, եկեղեցիներու զմբէթներու, տանիքներու, քիւրերու, գարդաբանդակներու եւ արձաններու վրայ:



Երասխ գիւղի միակ աղաւնի պահող 13ամեայ Սարգիս Մուրադեանի աղաւնիները

Հայկական հին մատենագրութեան մէջ, լեզուական ընտիր եւ եզակի հարստութիւն, ունեցեր ենք աղաւնեվաճառ, աղաւնեակ, աղաւնանման, աղաւնանալ (սպիտակ, մաքուր, անմեղ ըլլալ), աղաւնետուն, աղաւնակերպ բառերը: 15րդ դարուն «աղաւնի»ն դարձաւ իգական անձնանուն, ապա անմեղ եւ զգոյշ մարդը նկարագրող դարձուածք՝ «անմեղ աղաւնի», «երկչոտ աղաւնի»: Այս պատճառով ալ Գրիգոր Տաթեւացին «Գիրք հարցմանց» աշխատասիրութեան մէջ գրեց. «Աղաւնի: առանց դառնութեան եւ միամիտ եւ հեզ»: Կ'արժէ չիշել, թէ «աղաւնի»ն գրաբարեան միակ բառն է, որ պահած է «աւ» երկբարբառը ու արդի լեզուի մէջ չէ դարձած «աղօնի»:

Ոսկեդարուն հայկական «աղաւնի»ն, որ արդէն ընտելացած էր վանական համալիրներուն՝ մկրտարանէն մինչեւ զանգակատուն՝ սկսաւ սաւառնիլ հոգեւոր գրականութեան մէջ - հնագոյն օրինակը՝ Մովսէս Խորենացիի հոգե-

գալուստի շարականն է. «Առաքելոյ աղաւնոյ. Իջանելով մեծաձայն հնչմամբ ի բարձանց... Աննիւթական աղաւնի»: Գրիգոր Նարեկացին «Մատեն»ի մէջ հառաչեց. «Ես անպիտանս յամենայնի... մտեմ ի բոյնն աղաւնի, եւ անդուստ ազուա ելանեմ», Չաքարիա Քանաքեղցին նկարագրեց Սուրբ Կարապետը՝ «Ողջախոհ տատրակ ու անմեղ աղաւնի Սուրբ Կարապետ», Ներսէս Շնորհալին գովաբանեց երկու կոյս, նախ Հռիփսիմէն՝ «Իսկաճեմ աղաւնի օղապար... Հրեշտակ հրաշագեղ Հռիփսիմէն», ապա Մարիամ Աստուածածինը, «Միւրամարգ ոսկետիպ նկար, տատրակ ողջախոհ, մաքուր աղաւնի»: Լսենք միջնադարեան քանի մը ընտիր դայլայներ եւս. «Չքնաղ ու սուրբ կոյս Տիրուհի, ամբիժ տատրակ, սուրբ աղաւնի», Միքայէլ գրիչ, «Ընտրեալ ընտիր աղաւնի», Անդրէաս Արծկեցի, «Նորոգեցաւ տաճարս որպէս աղաւնի, / Եւ սուրբ հոգին իջեալ աղաւնակերպի», Վարդան Կաֆացի, «Բրինձ էի, գարի դառնալն ինչի՞ս էր, / Յիս աղաւնի, նուր լոր դառնալն ինչի՞ս էր», Սայաթ Նովա, «Աղաւնի քաղցրաբարբառ հեզաբանեալ զՏէր Յիսուս», Խրիմեան Հայրիկ: 1770ական թուականներուն Գրիգոր Օշականցին աշխարհականացուց «աղաւնի» բառը ու ան դարձաւ՝ գեղեցկուհի, սիրուհի. «Ոսկեփետուր իմ աղաւնի, երեւեցո՛ գերեսս քո ինձ, որ տազնապիմ»: Ապա եկան Գեղապաշտ շրջանի զգայուն քնարները. «Աղաւնի մը կ'ըմպէ անոր քարին վրայ խո՛ր փորուած / «Աստ հանգչիի» գրախորշին մէջ հաւաքուած ջուրերէն», Լեւոն Կսաճան-

եան, «Մա՛րն ի վեր, թռաւ զնաց հոգիիս սպիտակ աղաւնին... ո՛հ, իմ երագիս ճերմակ աղաւնին... երագանքիս սպիտակ աղաւնին», Աշներգ Ե. Պ.ին, Միսաք Մեծարենց: Իսկ, շնորհիւ Յակոբ Պարոնեանին, Պոլսոյ հայաբնակ ամբողջ թաղ մը դարձաւ... աղաւնի. «Արտաքին Քում Քաբուն բոլորովին տարբեր է ներքին Քում Քաբունէն, ինչպէս որ ամէն մարդու ներքինն տարբեր է արտաքինէն: Քում Քաբունի ներքինն օձ է, իսկ արտաքինն աղաւնի»: Պոլիսը, որ յայտնի է աղաւնիներով, բանաստեղծութիւն մը ձօնեց անոնց՝ Չահրատի գրչափետուրով. «Եթէ բառեր աւելնան... բառերով կը կերակրեմ թռչուններու նախամայր ջրհեղեղի աղաւնին / Ու բառերը բառ ըլլալէ կը դադրին / Աղաւնի կը դառնան»:

Այս բառը սիրունատես, սիրեց հայոց աշխարհը ու ամէն սարի վրայ, ամէն ձորի մէջ հետք ձգեց որպէս տեղանուն: Այժմ, անոր թեւերու թափը հետեւելով մտովի



Երասխ գիւղի վերջին աղաւնի պահողը, 13ամեայ Սարգիս Մուրադեանը

թռիչք կատարենք Հայկական լեռնաշխարհի վրայ. Աղաւնավանք գիւղ եւ վանական համալիր Տաւուշի մարզի մէջ, Աղաւնօ-գիւղական համայնք եւ գետ Արցախի Քաշաթաղի շրջանի մէջ, ինչպէս նաեւ լեռ՝ Արագածոտնի մարզի մէջ՝ Արա, Արագած եւ Արարատ լեռներու գմայլելի տեսարանով, Աղաւնատուն-Վաղարշապատէն ոչ շատ հեռու գիւղ, որու բնակիչներուն մէկ մասի նախնիները 1828-1829 թուականներուն աղաւնիներու նման գաղթած են Խոյնէն: Եւ, ինչքան տեսակ որ ունի աղաւնին, նոյնքան ալ գաւառական տարբերակները կան անոր անունին-Ակնայ մրգաստաններու մէջ աղվընի, Ջէթթունի ցից գազաթներու վրայ աղվընը, Սեբաստիոյ թռչուններու շուկային մէջ աղվընիգ, Ալաշկերտի հովիտի վրայ յեղվընեգ, Մշոյ դաշտի երկայնքով Արածանի գետի ափերուն հեղվընիկ, Ագուլիսի լեռնամասներու մէջ ըղօնի, Երեւանի մօտ Հրազդանի ձորի ժայռապատ բլուրներու վրայ աղունիկ, Թիֆլիսի մէջ Կուր գետի հոսանքն ի վար աղունակ, Վանի եւ Գորիսի ոսկեփայլ աչգիներու մէջ յեղունիկ, Արցախի խոր կիրճերէն ներս յեղօնէգ...

Բառս, պատահեցաւ, որ քանի մը անգամ ալ թառած ըլլայ մամուլի վրայ, մեզի պարզեւելով երեք պատուաբեր պարբերականներ. «Մասեաց աղաւնի», Փարիզ եւ Թէոդոսիա, «Նոյեան աղաւնի», Պոլիս, «Նոյան աղաւնի», Գահիրէ: 1889 թուականին Չմիւռնիոյ հայերը խոր յուզումով կարդացին «Նետահար աղաւնի», ազգային սիրաՎէպը, իսկ 1929ին, վերակենդանացաւ բրածոյ դարձած արտայայտութիւն մը՝ «թղթատար աղաւնի», երբ երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրեակին Երեւանի մէջ լոյս տեսաւ «Աղաւնիները ռազմական ծառայութեան մէջ» գիրքը:

«Աղաւնի»ն, մեր անգիտակ թռչունը, տասնամեակ մը առաջ էր, արժանացաւ մեծ պատիւի եւ ժողովրդականութեան, կարմիր գորգի վրայ քալեց, երբ վիպագիր Նար-Գոսի «Սպանուած աղաւնին» վիպակը շարժանկարի վերածուեցաւ: Յուզիչ է գիտնալ, թէ այդ գրքոյկը առաջին անգամ 1908ին լոյս տեսած էր քաղաքի մը մէջ՝ Բաքու, որու բոլոր հայազգի աղաւնիները - թեւերն արնոտ ու սրտաբեկ - շատոնց գաղթած են այդ երկնակամարէն:

Յարգելի ընթերցող, պատահեր են նաեւ ուրիշ ողբերգութիւններ: Աղաւնասպան եւ աղաւնեկոտոր բարբարոսներ համարձակեր են մեր բոյնը մտնել ու սրբապղծել գայն: Յովհաննէս Թումանեանը «Աղաւնու վանքը» ավանդադրոյցի մէջ պատմեց այդպիսի դրուագ մը. Թիմուր հալածիչը եկեր է Սեւանայ ափին, շղթայեր է հագար-հագարաւոր հայեր, ափամերձ վանքի ալեւոր ու բարի Հայր Օհանի աղօթքի փոխարէն, ան համաձայներ է վանքի չափ հայեր ազատ արձակել: Հասարակ վանք: Քանի՛ հոգի կրնայ փրկել: Սակայն, տեսեր են, որ դուրսը մնացեր է ո՛չ մէկ հայ, բոլորը մտեր են եկեղեցի: Ի՞նչ հրաշք է սա-, ապշեր է թիմուրը: Պատասխանի համար ականջ տանք հեքիաթասացին.

Մեր հայր Օհանը՝ աղօթքի չոքած,
 Աչքերն երկնքին, միտքն արցունքոտ.

Ով որ հայ ազգից մտել է իր մօտ,
 Իր սուրբ աղօթքով, կամքով վերինի,
 Փոխել է իսկոյն, դարձրել աղաւնի:
 Բաց պատուհանից թողել ամենքին,
 Թոցրել դէպ իրենց լեռները կրկին:

Այդ աղաւնիներու համար 1030-40ական թուականներուն Պետրոս Գետադարձ կաթողիկոսը գրեց է. «Ի վերին Երուսաղէմ, ի բնակարանս հրեշտակաց, ուր Ենովք եւ Եղիաս կան ծերացեալ աղաւնակերպե: Արդ, ով որ կարդայ այն լուրը, թէ՛ «Կեսարիա նահանգի թոմարգա (Տոմարածին) շրջանի Սուրբ Պողոս-Պետրոս եկեղեցին անմխիթար վերածուած է աղաւնիներու բոյնի»՝ հասկնայ, թէ անոր բնակիչները - հայրենաբաղձ, վշտաբեկ - վերադարձեր են տուն:

Այսօր մեր հրաժեշտի երգը, որու խօսքը եւ եղանակը կը պատկանին Արմէն Մովսիսեանին, միջոց ըլլայ, որ սա մեր փոքր խնդրանքը հասնի աղաւնիներուն: Երբ մ'ալ աղունիկ, քեզ մի բուռ կուտ տամ,
 որ դու մեր սարերին բարեւ տանես:
 Երբ մ'ալ աղունիկ, քեզ քաղցր ջուր տամ,
 որ դու մեր սարերից բարեւ բերես:

«Հաշուեյարդար»

«Հաշուեյարդար. ի՞նչ մնաց. կեանքն ինձի ի՞նչ մնաց. ինչ որ տուի ուրիշին. տարօրինակ, ա՛յն մնաց»

ՎԱՐՍԱՆ ԹԵՔԵՆԱՆ



ՂԿՏ. ԳՐԱՅԻՐ ԵՒՊԵՏԵԱՆ

Ապրիլ 1975: Լիբանանի քաղաքացիական պատերազմի սկիզբը: Այդ օրերուն չէինք կրնար պատկերացնել, թե՛ պիտի սկսինք ապրիլ նոր փուլ մը՝ բոլորովին տարբեր, քան ինչ որ ունեինք Լիբանանի մէջ: Չէ՞ որ Պէյրութը աշխարհի ամէնէն համալիչ քաղաքներէն մէկն էր: Այսպէս ըսած՝ աշխարհը քով-քովի բերող համալիչ քաղաքը: Այդ օրերուն կարծեցիկք, թե՛ քաղաքացիական կռիւները երեւի շուտով կը վերջանան ու կ'անցնին: Բայց այդ «շուտով»-ը եկաւ մեզ բոլորս դնելու նոր իրավիճակի մը մէջ:

Եւ կեանքը սկսաւ իր ընթացքը առնել: Ռմբակոծում, քանդում, մահ եւ գաղթ, ներառեալ՝ հայկական իրականութեան համար: Գաղութի թիւը զգալիօրէն նուազեցաւ: Երկրորդական վարժարանը հագիւ աւարտած էի, երբ արդէն բոլոր դասընկերներս մեկնեցան Լիբանանէն: Մեծ քոյրս, որ արդէն Լոս Անճելըս հաստատուած էր, «ալ խեր չմնաց Լիբանանէն» կրկնող յանկերգով քաջալերեց զիս, որ ես ալ Միացեալ Նահանգներ հաստատուիմ եւ հոն շարունակեմ համալսարանական ուսումս:

Ուրախութիւնս անսահման էր՝ այդ օրերու երիտասարդական տրամադրութեամբ եւ խանդավառութեամբ, վերջապէս պիտի իրագործուէր իմ ալ «ամերիկեան երազս»: Բայց այդ օրերուն նաեւ պիտի սկսէի սորվիլ, թե՛ կեանքն ալ ունի իր ընթացքը, որ անպայմանօրէն չի համընկնիր երազածիդ հետ:

Այդ օրերուն Պէյրութի մէջ ամերիկեան դեսպանատուն չկար: Պէտք էր Դամասկոս երթալինք՝ կատարելու համար բոլոր գործողութիւնները: Նկատի ունենալով, որ պատերազմական օրեր էին, Սուրիա հասնելու համար պէտք էր լեռնային ճանապարհները գործածել՝ իրենց ոլոր-մոլոր դարձուած քներով:

Դէպի Սուրիա ճամբորդութեան ընթացքին հայրս սրտի կաթուածով մահացաւ, ուստի պէտք է վերադառնալինք Պէյրութ: Յուրադակաւորութիւնը կատարեցինք շատ քիչ թիւով հարազատներու ներկայութեան՝ յար եւ նման ներկայ օրերու յուղարկաւորութիւններուն: Չէ՞ որ պատմութիւնը ինքզինք կը կրկնէ:

Բայց տակաւին որոշած էի իրականացնել «ամերիկեան երազս»: Ու դարձեալ Դամասկոս՝ ամերիկեան դեսպանատուն, ձեռքս խճողուած համալսարանական ընդունման եւ ֆինանսական ապահովութեան օրինական փաստաթուղթերով: Հիւպատոսին դէմքը խոժոռ էր, այնքան մը, որ մինչեւ այսօր տակաւին չեմ մոռցած զայն: Չուշացաւ իր նոյնքան անհաճոյ որոշումը. «Կարելի չէ քեզի ամերիկեան մուտքի արտօնութիւն տալ»:

Յուսախաբ՝ անպայման: Բայց նաեւ այդ օրերու երիտասարդական տրամադրութեամբ, Լիբանանի պատերազմական եւ անորոշ վիճակներուն դէմ յանդիման զգացի, թե՛ բոլոր երազներս չքացան: Ինչո՞ւ ես:

Պիտի վերադառնալի Պէյրութ եւ կեանքս շարունակէի այս վտանգաւոր ու անորոշ երկրին մէջ: Լիբանանի այդ բոլոր իրադարձութիւններուն մէջ պիտի տեսնէի, թե՛ ինչպէ՞ս պէտք էր կեանքս շարունակէի, բայց մանաւանդ՝ կերտէի: Լիբանանի մէջ տեղի ունեցածին կողքին կային նաեւ միջինարեւելեան տակնուվրայութիւնները: Տարածաշրջանը դարձած էր պայթուցիկ, իսկ աշխարհը կարծես կը դիտէր մեզ, մինչ մենք կը պայքարէինք կեանքի համար ու մահուան դէմ: Այս միջոցին էր, որ մայրս ալ մեկնեցաւ այս աշխարհէն՝ անակնկալ եւ անժամանակ մահով մը:

Լիբանանէն ետք աշխատանքային տարածաշրջանս դարձան Արաբական Ծոցի երկիրները: Հոս սկսայ տեսնել, թե՛ ի՞նչ կը նշանակէ քրիստոնեայ ըլլալ ոչ քրիստոնէական երկիրներու մէջ, եւ քրիստոնէական գործ ընել, այսպէս ըսած, «գոց» տարածաշրջանի մը մէջ: Եթէ մէկ կողմէ կար կրօններու միջեւ տարբերութիւն եւ զիրար հասկնալու անհրաժեշտութիւն, բայց նաեւ՝ տարբեր ազգութիւններու հետ ապրելու գրաւական: Պիտի սորվէի, թե՛ հայկականութենէ եւ լիբանանցիութենէ զուրս կայ ուրիշը, որ տարբեր լեզու, մշակոյթ եւ կենցաղ ունի: Պիտի սորվէի, թե՛ ուրիշը նոյնքան մարդ է եւ արժէք, գոր պէտք է յարգել, հասկնալ, բայց նաեւ՝ ընդունիլ:

Բայց այն, ինձի համար կեանքի մեծ դպրոց հանդիսացաւ մեծ թիւով ստիացի եւ ամբիկեցի բանուորներու ներկայութիւնը: Անոնք,

որոնք կ'ապրին ամէնէն դժուար պայմաններուն մէջ՝ փոքր աշխատավարձք, խճողուած ու խղճալի բնակարաններ, եւ տակաւին ֆիզիքական ու հոգեկան բռնաբարում եւ ճնշուածութիւն: Անոնք կ'ուզեն պատմել իրենց պատմութիւնը: Իւրաքանչիւրը ունի իր կեանքի փորձառութիւնն ու անոր ծանր լուծը, զորս իրեն հետ բերած է մինչեւ Արաբական ծոցի երկիրներ՝ երեւի թեթեւեցնելու եւ ձեռքազատուելու համար այդ բոլորէն: Բայց հոս կը տեսնեն, թե՛ աւելի կը բազմանան իրենց հարցերը եւ կը փնտռեն կարեկցութիւն: Ինչո՞ւ: Աշխարհէն:

Այսօր նստած եմ տունը՝ Քուէյթ, եւ միայն պատահանէն կը վայելեմ կապոյտ ծովը: Գարնանային պայծառ եւ արեւոտ օր մըն է: Կը դիտեմ ծովը եւ կը տեսնեմ, թե՛ որքա՞ն գեղեցիկ է եղեր: Վերջապէս Աստուծոյ ստեղծագործութիւններէն մէկն է, որ ԲԱՐԻ է: Կ'ուզեմ դուրս գալ շէնքէն եւ հասնիլ ծով: Բայց կարելի չէ, որովհետեւ կան երկաթեայ արգելքներ մեր ամբողջ թաղամասի երկայնքին եւ լայնքին՝ խոչընդոտելով ունէ բնակիչին ելումուտը:

Իսկ պատճառը՝ «Քորոնա» ժահրը, որուն պատճառով ալ մեր օրերու լոգունը դարձած է «Տուներ մնա՛, ապահով մնա՛»: Այս ժահրն ալ երեւի 1975-էն սկսեալ իմ-մեր կեանքերու շարունակուող պատերազմ-անորոշութիւն-անապահովութիւն վիճակն է: Միայն մէկ տարբերութեամբ՝ այս անգամ ամբողջ աշխարհը կ'ապրի միեւնոյն տագնապը: Չկայ դիտող: Բոլորս նոյն վիճակին մէջ ենք:

Պատմութեան ու անոր իրադարձութիւններուն սլաքը ետեւ տանելով՝ կ'երթամ մինչեւ 1975, երբ Լիբանանի պատերազմը սկսաւ: Եւ մէկ-մէկ սկսայ ապրիլ իւրաքանչիւր անորոշ եւ բախտորոշ իրավիճակներ՝ հասնելով մինչեւ ներկայ՝ ժահրին հետ մեր հանդիպումը: Այս բաւական երկար ճամբուն նայելով՝ սկսայ մտածել: «Շատ չէ՞ այսքան պատուհաս մէկ կեանքի ժամանակահատուածի մը համար»:

Ծանրաբեռնուածութենէս զուրս կու գամ եւ կը մտածեմ այս երկիրներուն մէջ ապրող բանուորներուն՝ բարեկամներուս մասին: Այս օրերուն եւ Արաբական ծոցի տարածաշրջանին մէջ մեծ մտահոգութիւն է բանուորներուն վիճակը: Երբ պետութիւններ կը քաջալերեն ժողովուրդը, որ իրարմէ հեռու մնան ապահով մնալու համար, անոնք՝ բանուորները, իրենց

խճողուած սենեակներուն մէջ, մէկը միւսին ետեւէն կը վարակուին ժահրով: Ո՞վ պիտի ազատէ զիրենք, եւ ո՞վ պիտի հոգայ ու խնամէ զանոնք:

Դարձեալ ծովն է, որուն կապոյտ ջուրերուն նայելով դարձեալ կ'ապրիմ անոր գեղեցկութիւնը: Ծովը, տիեզերքը եւ այդ բոլորը կազմող մեր կեանքը, իսկ գեղեցիկ կեանք ապրելու համար պէտք է նոյն այս կեանքը լիցքաւորել: Աշխարհը այսօր այս ժահրին դէմ յանդիման կը գտնուի, այդ պատճառով ալ կանգնած է կարեւոր փուլի մը դէմ յանդիման: Ինչպէ՞ս պէտք է լիցքաւորել այսօրուան աշխարհն ու մեր կեանքը այս փորձառութենէն ետք, ի՞նչ արժէքներով ու պիտակով:

1975-էն ետք առիթ ունեցայ բազմիցս Ամերիկա այցելելու: Այն երկիրը, որ այդ օրերուն մերժեց զիս ընդունիլ: Բայց ես շարունակեցի կեանքս Միջին Արեւելքի մէջ՝ անոր բոլոր անորոշութիւններուն եւ տակնուվրայութիւններուն մէջ: Այսօր, երբ աշխարհին հետ բոլորս ալ կ'ապրինք տակնուվրայ օրեր, երբ այլեւս չկան աշխարհագրական գործօնն ու անոր ապահովութիւնը եւ առանձնաշնորհումները, բոլորս միասին ենք՝ նոյն պարունակին մէջ ու անոր դէմ յանդիման:

Եւ կայ կարեւոր պարտականութիւն-գիտակցութիւն մը՝ բոլորիս կեանքերը լիցքաւորելու հրամայականը: Ի՞նչ, ինչո՞վ եւ ինչպէ՞ս...

Ու դարձեալ անհասանելի այս գեղեցիկ ծովը: Տեսայ նոյն ծովուն մէջէն, թե՛ կեանքը գեղեցիկ է: Նաեւ իմ կեանքս՝ անկախ իր բոլոր դժուարութիւններէն: Եթէ փարեցայ եւ սիրեցի կեանքս իր ամբողջութեան մէջ՝ Լիբանան, Արաբական ծոցի երկիրներ թե՛ այլուր, այդ ալ որովհետեւ տեսայ, թե՛ Աստուած զայն ստեղծեց գեղեցիկ եւ կոչեց՝ ԲԱՐԻ:

Իսկ մա՞րդը: Ի՞նչ ըրաւ նոյն այս գեղեցիկ եւ բարի կեանքին հետ:

Քուէյթի տանս մէջ կալանաւորուած, ծովը դիտելով հաշուեյարդար կը կատարեմ կարծես: 1975-էն մինչեւ այսօր: Եւ այդ կեանքին բոլոր ելեւէջներուն մէջ կ'ըսեմ. «Կեանքէն ինձի ի՞նչ մնաց»: Բանաստեղծին պատասխանը դիպուկ է. «Ինչ որ տուի ուրիշին»: Ի՞նչ բանն է, որ պիտի տանք

Շար.ը էջ 19

COVID-19
HOTLINE

ՄԴՎԿ-ի
Խորհրդատուական Գրասենեակ

(888) 908-1887
contactus@aebu.org

ՄԴՎԿ Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմինի Գախաձեռնութեամբ ու համագործակցութեամբ Հայկական Կրթական Բարեսիրական Միութեան (ՀԿԲՄ) եւ Հայ Ամերիկեան Խորհուրդի (ՀԱԽ) կը յայտարարէ որ «քորոնա» ժահրի ստեղծած տագնապալի վիճակին բերումով կեանքի կոչած ենք յատուկ գրասենեակ մը:

Սոյն գրասենեակը խորհրդատուական ծառայութիւններ պիտի տրամադրէ պետական եւ այլ նպաստներէն օգտուելու կարելիութիւններուն մասին, որպէսզի Հայ քաղաքացիները կարողանան որոշ չափով յարթահարել տնտեսական դժուարութիւնները:

Խորհրդատուութեան եւ օժանդակութեան համար կարելի է դիմել հեռաձայնելով հետեւեալ թիւին. 888-908-1887
Կամ. contactus@aebu.org

«Գարուն ա, Ծաղիկ է Արել» ...

Երկինք ու երկիր մեզ ծայն են տալիս՝
Դռները բաց՝ք, գարուն է գալիս:
Համո Սահեան

ՊՕՂՈՍ ԼԱԳԻՍԵԱՆ

«Գարուն ա, ծաղիկ է արել»:
Արեւի շողերի հէքիաթ է գարունը,
բա՛ց արա հոգուդ աչքերը, փերի-
ները երկնքից իջել գարուն բերում
երկրին, մարդկանց սրտերը
թրթռացրել տիեզերքի սիրով: Գա-
րունը, սիրոյ բողբոջումէ, մարդ-
կանց սրտերին վառուող լոյս: Աստ-
ղերի լոյսը քու աչքերում այցի ես
եկել երկիր: Կեանքը գարնանային
լոյսի թրթիւ է, հէքիաթային վա-
յելք, արեցի՛ր՝ նրանով, գինովցի՛ր
լոյսով, հոգիդ վարարի՛ր գարնան
շունչով:

«Գարուն ա, ծաղիկ է արել»:
Գարնան լոյս իջել արմինների
լեռնաշխարհին: «Հայկ Համաստե-
ղութեան» հայոց հին աստուածնե-
րու տաճարից Արամազդի դուստր
Անահիտ դիցուհին «Արմինա» եր-
կիր եկել, բուռ-բուռ ծաղիկ փուել
հայոց լեռների լանջերին, հայոց
դաշտերի ցորեանի ծովակների ալ-
եակներին: Մայրանալու լոյս ցա-
նել այգիներում, ծառերն էին ծի-
ծաղում, ծաղկի լոյսի հրդեհ էր,
արեւը իր կրակի լոյսի եօթ գոյնե-
րի ծիածան գօտի կապել նրանց
թեւերին:

«Գարուն ա, ծաղիկ է արել»:
Հայոց լեռների լանջերի բացատ-
ներում հազար գոյնի մանուշակն
էր խնդում, դիտե՛լ ես նրա աչքե-
րից կաթած լոյսը: Գարնան շուն-
չից հայոց լեռների ձիւնն էր հալ-
չում, հողից պայթում էին շաղոտ
ժպիտով կարմիր, կապույտ, սպի-
տակ ծաղիկներ: ձնծաղիկներ:

«Գարուն ա, ծաղիկ է արել»:
Մտել՞ ես ծաղկած այգիներ,
տեսե՞լ ես ծիածանացած ծառերը,
ունկնդրե՞լ ես նրանց ծաղկած
լոյսի համանուագը: Քու հոգին էլ
ծաղիկ չի՞ դարձել, քու հոգին էլ
մայրական սիրոյ հրճուանքով չի՞
խայտացել: Քու երկիրը յափշտա-
կած անօրէն մարդիկ արդեօք մտե՞լ
են նախնիներիդ «Մայր Դիցու-
հու» խանդաղատանքով պայթած
ծաղկած այգիներ, չէ՞, եթէ այն-
տեղ եղած լինէին, ունկնդրած լի-
նէին նրանց երգը, նրանց հոգիներ-
ում էլ արարում ծաղկած կը
լինէր: Անբան, անօրէն, անբարոյ
մարդիկ, Աստուած նրանց հոգիներ-
ին երբեք գուժ էլ կաթել:

«Գարուն ա, ծաղիկ է արել»:
Գարնան մեղմիկ գեփիւռի շունչի
հեշտանքից թռչունների երամներն
են գալիս հայոց երկիր, գարուն
երգում: Քու աշխարհի հէքիաթ
գարնանը ծիածաններն են վերա-
դառնում երկիր, յիշո՞ւմ ես նրանց
լոյսային թիւիչքը քու ոստանի
երկնքում, հապա նրանց ծիծաղի
կանչը...: Գարունը, կուռնկների
երամների հէքիաթը չէ՞, որոնց
պանդուխները աղաչում էին խապ-
րիկ մը բերել իրենց աշխարհից:

«Գարուն ա, ծաղիկ է արել»:
Մեհեան է ծաղկած այգին, մեհեան
բաց երկնքի տակ, ոչ թէ փակ ու
մութ խորշ: Աղօթո՞ւմ ես այնտեղ,
չէ՞, բնութեան արարչութեանը
չեն աղօթում, սքանչանում են նրա
հէքիաթով, նրա մայրացման խոր-
հուրդով, նրա լոյսով: Լո՞ւս, կեան-
քի առեղծուած, ամպերում իրար
դէմ կուռի ելած հիւլէների պայ-
թիւնի, երկնքում իրար փառելու
հրճուանքի պոռթկումն է այն:
«Լոյսի մի շողը, մութ յաւիտեանն
արժէ», խօսել էր «Հեթանոս երգի»

բանաստեղծ Վարուժանը, ինքն էլ
Արմին-հայ աստուածների Աշտի-
շատ աւանի վահագնի վահե-
վահեան մեհեանի քուրմ:

«Գարուն ա, ծաղիկ է արել»:
Բանաստեղծներն են գարուն դառ-
նում, նրանց հոգիներում գարնան
արարչութեան ջահեր են վառուում,
որոնց լոյսից բանաստեղծութիւն է
ճառագում: Բանաստեղծներ, մարդ-
կանց հոգիներին լոյսի անձրեւ են
շաղում, հազար-հազար տաղերի
համագարկ գարկում: Իրենց լեռնե-
րի լանջերից ծաղկունքի փունջեր
կապած՝ գնում բարձրանում ողիմ-
պոսի գագաթ, գինով լի բաժակներ
գարկում բանաստեղծութեան ներշն-
չանք պարգեւող մուսաների ու
նրանց եղբայր Ապոլլոնի հետ, բա-
քսուհիների գինարբուքի խրախ-
ճանքի տօնահանդէսներին երգի
հրճուանքով արբենում, գարուն
դառնում:

«Գարուն ա, է ծաղիկ է արել»:
Գարնան բոցավառ վարդերը, հէք-
իաթ են, Աստուած սիրոյ կրակ է
ցանել նրանց թեթիկներին: Վարդ,
գարնան արեւը եօթ գոյների շող-
շողուն լոյս փուել նրա երեսին:
Աստղերի կրակալոյսը աչքերում՝
գեղեցկութեան դիցուհի Աստղիկը,
Արածանի գետի ափերի սպիտակ
վարդաստանների վրայից ճախրե-
լու ատեն փուշը ծակել է ոտքը,
կարմիր հուրով ծածկել վարդերի
թերթիկները, սիրոյ բուրմունք
ցանել նրանց վրայ:

«Գարուն ա, ծաղիկ է արել»:
Արամազդի որդի, արեւ աստուած
Միհրն է ժպտում Արմինա աշխար-
հին: Լոյս հոսում արտերի ցորեանի
ծովակների վրայ, նրա գարնանա-
յին տաք շունչից հողի սիրտն է
փափախում: Իրենց թեւերը դէպի
արեւ տարած ծառերը, նրա լոյսն
են ըմպում, կանաչում, նրանց բոյ-
լերից ծաղիկ պայթում: Սպիտակ
պատմուճան հագած լեռների գա-
գաթները սարսուռում լոյսի շողե-
րից, նրա ջերմ համբույրից: Արեւի
շունչը ձիւնի քողերը պատում՝
հազար-հազար գոյների ծաղիկներ,
ձնծաղիկներ, փրափիոն ծաղիկներ
ծիծաղում Մանկական մատներով
փորել են Մուսաների լեռան լան-
ջերի ձիւնը, ձնծաղիկ են հանել
հողից, փնջեր արած եկել փարել
մայրիկիս, մեր աշխարհի գարունը
նրան աւետել: Ասում էին, որ
Արմինների Աստղիկ Դիցուհին ամէն
գարնան գալիս է հայոց լեռներ,
ձնծաղիկների թերթիկներ քաղում,
սաւառնում հայոց շէների վրայ,
ափերով այն ներքեւ ցանում, որ
մայրերը այդ ձիւնոտ ծաղիկների
նման փթիթ դուստրերը ծնէին:
Ահա թէ ինչու են արմինների
դուստրերը այդքան սիրուն-սի-
րուն են՝ հրաշագեղ Աստղիկ դիցու-
հու նման:

«Գարուն ա, ծաղիկ է արել»:
Հայոց երկրի հողն է արեւ աստ-
ուած Միհրի լոյսի շողերից ջեր-
մում: Ռանչպարներն են հանդե-
րում, ափերով վերցնում այն, տա-
նում երեսներին, համբույր շաղում
նրա տաքուկ դէմքին: Հողի պաշ-
տամունք էր հայոց երկրում, ունչ-
պարների սրտերից պաշտամունքի
ոգի է ծորում նրա դէմքին: «Հայ-
րենի», «Մայրենի» են կոչել այն,
յաւիտեան «թեթեւ» ննջում նրա
գրկում, մինչեւ որ փոքր Մհեր
դուրս ելնի ժայռի սրտից՝ յարու-
թիւն պարգեւի արդարներին:
Իրենցից յափշտակուած երկրից մի
փշուր հող են տներ բերում, աղօթք
մրմնջում այնտեղ հոսած նախնի-
ների խոնջանքին, նրա պաշպանու-



թեան մարտերում նահատակուած
արեւորդիների արեան գոհաբե-
րութեանը:

«Գարուն ա, ծաղիկ է արել»:
Ծովինար աստուածուհուն Չուր է
վարարում է հայոց աշխարհին,
լեռների լանջերի սրտերից աղ-
բիւրներ են պայթում: Արմին ցեղի
դիւցազն Անդրանիկը, Մասուն աշ-
խարհի Մարութա սարի «Անահի-
տի Աղբիւր»-ից պայթած սպիտակ
ձիւն սանձած՝ ճակատել թշնամուն:
Գարնան Չուրն է հոսում հայոց
աշխարհի դաշտեր, կեանք պարգե-
ւում հողին: Չուրը կեանք է, յաւեր-
ժութիւն է, երկիր մոլորակի կեան-
քի արարման առեղծուածը: Աստ-
ուածացած տիրուհի Ծովինարը
հէքիաթ է, ինքը «Չրածին», ինքը
Չրից յղացած, ինքը Չրում ծնել
Սանասար, Բաղդասար որդիներ-
րին, ինքը տիեզերական հեռուներ-
րից Չուր անձրեւում: Սանայ Մհերն
է իջել Չրեր, հեծել թամբած
«Քուրքիկ Ջելալին», մէջքին կա-
պել «Թուր Կեծակին», Չրից թուել,
ճախրում դէպի արեւ: Քուրքիկ
Ջելալին էր կանչել՝ «Ո՛ւր ես
տանում ինձ, կը գնամ արեւ...
կ'այրեմ քեզ»: Չէ, տար ինձ արեւ,
որ մի փունջ պոկեմ նրանից, բերեմ
տամ Մակարավանքի սիրահար
աղջկան: Մհերն իջել նրա իրանի
տակ, կանչել՝ «Չես կարող ինձ
այրել, տար ինձ դուշմանի դէմ
կուռի»: Գարնան հէքիաթ է անձ-
րեւը, Նար Ծովինար դիցուհու
օրհնութիւնը, մոլորակի կեանքի
շունչը: Դուրս արի պատշգամբ,
նայիր անձրեւի շիթերին, նրանց
երեսներին լոյս կայ, երկնքի երգն
են բերում մոլորան: Իրար ճակա-
տող ամպերի շանթերի կրակալոյ-
սը բրկած, ժպտում քեզ: Դու էլ
ժպտայ անձրեւին, թող սիրտդ
խայտայ նրա թովչանքից:

«Գարուն ա, ծաղիկ է արել»:
Աճրեւին, իմ հայրենի երկրի ծաղ-
կազարդ այգի ելել, ունկնդրել նրա
համանուագը, դիտել նրա հեւքից
ծաղկած ծառերի ծիծաղը, մանուկ
հոգու խռովքով շոյել հողի շունչի
տակից պայթած աշնանային ցոր-
եանի կանաչ-կանաչ ծիւղերը: Դու՞
էլ գարնան անձրեւին դու՞րս արի,
նայի՛ր վազող Չրերին, այն նախ-
նիներիդ Չրի պաշտամունքի Նար
Ծովինար աստուածուհին է ընծայ
բերել քու երկիր, ունկնդրիր նրա
հոգապարար երգի համանուագը,
դու էլ նրա հետ երգիր ունչպար-
ների հոռովելները, տե՛ս, տե՛ս
սիրտդ ինչքան պիտի վարարի
նախնիներիդ սիրոյ սարսուռնե-
րով: Գարնան հրավառութիւն է
այն:

«Գարուն ա, ձիւն է արել»:
Չէ՞ վարդապետ, հայոց աշխարհը
«ձիւն չի արել»: Վարդապետ,
այլեւս «կարմիր» ձիւն չի գալ,

«Գարուն ա, ծաղիկ է արել» հայոց
լեռնաշխարհը, Մայր Անահիտը,
գարուններին ծաղիկ է փուում հա-
յոց հանդերին, լեռների լանջերին,
որ՛ ալուան հայ աղջիկներ այնտեղ
«Համբարձում Եալա» տօնախմ-
բեն, հայոց գուսանների տաղերը
հնչեն, որոնք հովիկների թեւերին
լենած գնան աշխարհին աւետեն
հայոց ու նրանց երկրի հրաշափառ
վերածնունդը: Չէ՞ վարդապետ,
հայոց աշխարհի ընդերքի հազար
գոյնի քարերից՝ հայոց մայր ոս-
տանը, շէները «Կրակէ շապիկ» են
հագել, հայերի ակներից ծիծաղի
արցունք է հոսում:

Չէ՞ վարդապետ, հանգիստ
ննջիր մայրենի հողում: Հայոց հին
աստուածները տիեզերական իրենց
տաճարից նորէն կարմիր, խոշոր
աստղ են ճամբել հայոց լեռնաշ-
խարհի երկնակամար, լոյսի կրակ
է հոսում նրանց սրտերին, գէնք են
վերցրել, կուռի են ելել: Չէ՞,
այլեւս չեն թողնի, որ «Կարմիր»
ձիւն գար հայոց լեռաշխարհին:
Հայ մշակները քու հոռովելներով
հողն են ախօսում, սերմնացանները
ցորեան են շաղ տալիս հողի երե-
սին, այգիներում ծաղկի ծիածան
կապած ծառերը գարնան հէքիաթ
է, հայոց աշխարհի մարդիկ գա-
րուն են դարձել:

«Գարուն ա»:
Գնում էինք
Արարատին նայելու, կանգնում վի-
րապի բլուրին, դիմացը հայոց
լեռնաշխարհի սրտից վեր խոյա-
ցած Արարատ-Մասիսներն են: Արե-
ւածեմ սպիտակ գագաթից ձիւնոտ
Չրերն էին շեղ-շեղ իջնում
Երաստ-Երասխի Չրերին: Անէա-
ցած դիտում էինք հայոց լեռնաշ-
խարհի սրտից յառնած լեռանը:
Նրա աստուածային ոգին, Արմինա
երկրի արեւորդիների հոգիներին
ցեղի յաւերժութեան պաշտամունքի
լոյս վառում: Ինչպէ՞ս է, որ
լեռն ու այդ անյագ ոգի կաթում
հայոց սրտերին, ինչպէ՞ս է, որ
«խորհուրդ-խորին» պատարագի
շարականների երգեր ցնծացնում
արորդիների հոգիներին: Նրա
շուրջն էր ծաղկել մոլորակի մարդ-
կանց երազային աշխարհ Եղեմ-ը,
նրա ստորոտին նորէն «Կեանք»,
«Մարդ» էր «ծաղիկ»: Բարեպաշ-
տութեան, հողի պաշտամունքի,
ճշմարտութեան լոյս էր այնտեղ,
աստուածների անհատում բարիք,
խնդութիւն, առատութիւն էր այն-
տեղ:

«Գարուն ա»:
Արարատ, քա-
րեղէն սիրտը հայոց աշխարհի,
ձեռքերնիս երկարում էինք, որ
հպենք նրա անուշ դէմքին, ձնծա-
ղիկ քաղենք նրա ձիւնոտ հողից, որ
տանէինք վահագնի ծնունդին, ափով
ձիւն ժողուէինք... հիւսիսի տիրա-

«Գարուն և, Ծաղիկ է Արել» ...

Շարունակուած էջ 17-էն

կալի փռած երկաթ փշերն էին ծակում մատներնիս: Հիւսիսից մարդիկ եկել, քարէ սիւներ դրել հայոց աշխարհի հողին, փշէ լարեր կապել նրա ճակատին, մայր գետի ջրերին: Լացում էր Արարատը, ձիւնոտ արցունքները առուակ-առուակ հոսում Երաստի ջրերին, վշտից փրփրած գարկում փեղերին, գնում Մարաստան երկրի արտերին, հանդերին:

Բլուրի ստորոտին, հայոց նոր հաւատքի տաճար է, նրա գմբէթի գլխին իրենց արիական ցեղի արեւի լոյսի, բարեկեցութեան, բերրիութեան խորհրդանիշ նշան՝ խաչ է... արմինների նախնիներ, իրենց հին աստուածների տաճարները՝ Միհր աստուծոյ անունով մեհեան

ըններ իրենց փոխանցուել էր նախնիների աւանդութիւնը, որ հայոց աստուածները իրենց երկրի հեռոտ, քաջ, առաքինի առաջնորդներն էին եղել, այնքան արդար ու սիրելի, որ նրանց աստուածացրել էին, ինչպէս Արա-յին, Հայկ-ին, Միհր-ին, Տիր-ին, Վահագն-ին, Վանատուր-Ամանոր-ին, Անահիտ-ին, Ծովինար-ին, Աստղիկ-ին, Նանէ-ին, պատերազմներում յաղթանակած Վահագնին պատկերացրել էին բոցերից յառնած, նրանց իւրաքանչիւրին փառաբանել էին բնութեան իմաստութեան տարբեր երեւոյթներով: Տրդատ արքան պատժից ազատել էր Գրիգորին, հրամայել հայոց երկրում օտար «Աստուծոյ Որդու» հաւատքի ուսմունքը դաւանել: Այդ իմաստուն արքան դաւեց իրենց Արմի-

րի վրայով, մտել Արարատի վիհեր, ձնծաղիկ քաղերու համար բարձրանում Արարատի լանջեր, այն ընծայելու համար Վահագնի ծննդեան տօնին: Վիհում հանդիպել էին ժայռին շղթայուած Արտաւազդ արքային, փշրել էին նրա ժանգած շղթաները, ազատ արձակել:

Գառնի փլած ամրոցի առաջ տիեզերքը խորհրդանշող Միհր արեւ աստուծոյ սիւնազարդ մեհեանն է խորխոր կանգնած, դիմացը՝ որսորդութեան հմայքով յափշտակուած Խոսրով կոտակ արքայի որսատեղի լայնատարած անտառն է: Ընդերքի խոռովքը փլել էր տաճարը: Հայ քարագործ վարպետները, տաճարի վերականգման ճարտարապետի հետ տեղաձշտել փլած տաճարի բեկորները, կորածների փոխարէն նորերը տաշել եւ նոյն վեհութեամբ յաղթ կազմեցրել: Արմին-հայերի լոյսի փառաբանման Միհր արեւ աստուծոյ միակ կանգուն մեհեանն է:

«Գարուն և»: Հայ պարմաններ, «Աստուածամարդ Նահապետ» Հայկի, հայկազուն արքաների, հին աստուածների ոգու կրակը իրենց սրտերում, Արարատի վիհից Արտաւազդ արքային Միհրի մեհեանն առաջնորդել: Նրա հրապարակում հազար-հազար Արմին-հայեր օտնական ցնծութիւն էին շեփոքում, թմկահարն էր ուժգին զարկում, ծիրանի փողերն էին թունդ հնչում: Ծուրջ պարի շարքերն էին լոյսի ճառագայթներին յենած պար բռնել: Արքան էր բարձրացել մեհեան, քրմուհիներն հեթանոսական տաղերով դիմաւորել նրան: Ատրուշանի մոխիրն էր խառնել, հազար-հազար տարիների Միհրի անշէջ կրակ վերցրել, երկինք նետել, որ հայոց աշխարհում կրակի ու լոյսի հրավառութիւն լինէր:

«Գարուն և»: Վահագնի ծնունդն էր: Տաճարի աստիճաններից իջնում էին արեգակունք ակներով, Միհրի արեւահոլով վարսերով, կրակ պատմուճանով Վահագնը, եղէգնեայ ջահը վեր պարզած Արտաւազդը, հայոց մայր ոստանի Արմէն քուրմը: Բամբեր էին որո-

տում, ծիրանի փողեր, փանդիւններ հնչում, հազար-հազար արմիններ Վահագնի ծնունդի երգն էին թնդում: Մեհեանի աստիճաններին, շարան-շարան արեւալոյս քրմուհիները Արմինայի աստուածներին ձօնուած տաղերն էին հնչում, Արտաւազդն էր եղէգնեայ ջահի կրակալոյսը հոսում տաճարի հրապարակի Արմին-հայերի սրտերին: Հայոց աստուածները Արարատի գագաթից բուռ-բուռ ձիւն էին տեղում տաճարի հրապարակ: Արմին հայերը, լայն շրջանակներ կազմած, հեթանոս նախնիների պարերն էին բռնել: Սեղմել էին շարքերի բոլորակը, Վահագնի ու Արտաւազդին գրկել, ձեռքերի վրայ վերեւ բարձրացրել, որ նորէն բարեպաշտութիւն, միասնութիւն հօսէր հայոց սրտերին, հայոց աշխարհին:

«Գարուն և»: Հայոց մայր ոստանի փողոցներ էին ելել հազար-հազար Արմին-հայեր, խնդում, ժպտում, ողջոյնում իրար: «Բամբ Որոտան» քայլերգով Արտաւազդին առաջնորդել Արմինա-Հայաստան երկրի մայր ոստանի «Պալատ», որ նորէն հայոց աշխարհին թագաւորէր հայկազուն արտաշեսեանների տոհմի զարմից արքան:

Այո, գարուն Մայիս ամսին, Հայկի զարմից՝ «Արա»յի որդի մի Արմին, բազմել է «Հայոց գահին» երկիրը կառավարելու իրենց հին աստուածների բարեպաշտութեամբ, ճշմարտութեամբ, իմաստութեամբ, պրպրամութեամբ:

Հայա, նաեւ մտիկ արա բանաստեղծ Վահան Թէքէեանին՝
Օ~h, այս գիշերը գարնան՝
Ինչ անուշ է, ինչպէս լաւ...
Ինչ հեշտանքով կը սարսռան
Սրտերն անոր պատճառաւ...
Կարծես աստղի փշրանքներ
Կան օդին մէջ հալած,
Երկրի վրայ դրախտ մի սեր
Կարծես թափած է Աստուած ...
Գարնան շուկներ կը տեսնեմ
Ձեզ թռչող ամէն տեղ՝
Յոգիներու պէս անմեղ...
Եւ կը տեսնեմ լուսաճեմ,
Քեզ ալ, տղու իմ հոգիս,
Որ համբուրել կուգաս զիս...



են կոչել: Սպաննեցին իրենց բարեպաշտ հին աստուածներին, փլեցին նրանց հաւատքի փառաբանման տները: Նրանց լացող վէմերով նոր հաւատքի տաճարներ պատեցին, ցեղակից յոյներից փոխ առած «Եկեղեցի» անուանեցին: Խորը վիրապ կար այնտեղ: Աւանդել են, որ այնտեղ էր տասնըհինգ տարիներ բանտարկուել Պարթեւաց ցեղից, Արշակունի տոհմի արքայասպան Անակ իշխանի որդի՝ Սուրենը: Գրիգոր դարձած եկել հայոց աշխարհ, գինուորացրուել հայոց բանակ, տոհմի մեղքը քաւելու, թէ՞ դաւելու:

Հայոց արքայ Տրդատն էր այդ վիրապում բանտարկել Սուրեն-Գրիգորին, թշնամու դէմ տարած յաղթանակի պատուին Մայր Անահիտին ծաղկեպսակ ճմաստուցանելու համար: Հայոց արքաները, օրինախախտներ, յանցաւորների նկատմամբ մահուան վճիռներ չէին արձակել, բանտարկել եւ անշուշտ նրանց կերակրել էին: Այդ բլուրը՝ իրենց նախնիների Արմինա երկրի լքուած բերդ եղել՝ վերածուել բանտի:

Արեւմուտքում կրթութիւն ստացած իմաստուն Տրդատ Գ. Արքան, տարբեր հաւատքներ դաւանող երկու սահմանակից կայսրութիւնների ցեղերին ու մշակոյթներին չձուլուելու համար, մտադրուել էր իր թագաւորած երկիրը «Քրիստոնեայ» նոր հաւատքին առաջնորդել: Հարիւր-հարիւր տարիներ առաջ, նրա առաքելները հասել էին հայոց աշխարհի հարաւ, քարոզել էին իրենց հաւատքի ուսմունքը: Տրդատ արքան, այդ ուսմունքում նկատել էր նաեւ իր նախնիների Միհրաւկան տիեզերական հաւատքի բարեպաշտութեան, ճշմարտութեան ու սիրոյ լոյսը: Հազար-հազար տա-

նա երկրի նախնիների հաւատքին: Սպաննեցին այն, սպաննեցին իրենց նախնիների աստուածացած առաջնորդների ուսմունքը, սպաննեցին իրենց հազար-հազար դարերի երկնած իմաստութիւնը, քանդեցին նրանց տաճարները, որ Արմին-Հայր չփառաբանէր նրանց իմաստութիւնը: Արմին-Հայր իր հետ յաւերժութիւն տարաւ հին աստուածներին: Միհրի տաճարում տօնախմբում նրանց ծնունդը: Հռովմի կայսրերը նաեւ տօնախմբել էին Միհրի ծնունդը, այն տօնել էին ձմռան արեւադարձին՝ Դեկտեմբերի քսանհինգին: Բազում դարեր յետոյ, հռովմէացիք այն համարեցին իրենց նոր հաւատքի Վարդապետի ծննդեան օր: Զուգադիպութիւն, թէ՞ իրենց հին հաւատքի յուշերի արձագանգ:

Հայկական լեռնաշխարհի անհաս գմբէթն է ընդերքի խոռովքից պատուուել, խորը վիհեր են այնտեղ: Ոչ ոք չի յանդգնել բարձրանալ նրա գագաթ: Ասում են, թէ չարքեր են այնտեղ Արմին «Հայ» Հայկազուն արքայ Արտաւազդին շղթայակապ գամել ժայռին: Հայկազուն Արտաշէս անուշ արքան էր անիծել որդուն՝

«Թէ դու ձի հեծնես որսի գնաս, Ազատն ի վեր դէպ Մասիս, Այնտեղ մնաս լոյս չտեսնես»:

Արտաւազդը հօրը թաղման արարողութեան ժամանակ կանչել էր՝

«Երբ դու գնացիր ամբողջ երկիրը քեզ հետ տարար, Ես այս աւերակաց վրայ ո՞ւմ թազաւորեմ»:

«Գարուն և»: Իրենց ցեղի աստուածացած հերոս առաջնորդների փառաբանման ոգով արբեցած պարմաններ, քանդել էին փշալարերը, ճախրել Երաստի ջրե-

Ղողանջները Յաղթանակի՝

Շարունակուած էջ 6-էն

բաղցիք չէզոքացնելով թիկունքային վտանգը՝ Ծուշիէն եկող, որոշ տատանումներէ ետք կարողացան շրջել ռազմական պատկերը եւ ազերիական սեղմօղակը աստիճանաբար դուրս մղել եւ քայլ առ քայլ գանտնք ընդհուպ շարտել հոն՝ ուրկէ կու գային կատաղի մոլուցքով: Ուստի, 1992 Մայիս 9-ին արձագանգած ղողանջը, նախերգանքն էր Ղարաբաղի վերահայացման, հայութեան յաղթանակին ընդհանրապէս եւ արցախահայութեան յատկապէս:

Ընդհանուր առմամբ Ծուշին եղած է կռուախնձոր հայ-ազերի պայքարին: 1750-ին, երբ առաջին թաթարը ոտք հաստատեց հոն, միշտ ալ Ծուշիի շուրջ կռիւները եղան արիւնալի: Բազմիցս փորձեցին իւրացնել գայն. 1905-ին, 1918 եւ 1919-ին անոր շուրջ մագլցողական ճակատումները ունեցան ծանր հետեւանքներ: 1919-ին անգլիացիք արգիլեցին զօրավար Անդրանիկի մուտքը Արցախ, որ պիտի կրնար երաշխաւորել անոր անվտանգութիւնը ազերիական ախորժակէն: Սակայն, 1920-ի Մարտին, Ծուշիի մէջ տեղի ունեցաւ հայոց

ամենավայրագ կոտորածը Սուլթանովի ղեկավարութեամբ եւ թրքական ուժերուն մասնակցութեամբ: Քաղաքին հայկական թաղամասը զոհ գնաց հրդեհներու լափիլիզումին: Ծուրջ 10 հազար հայեր նահատակուեցան այդ դաժան սրածուծութեան: Ծուշեցի մեծամուն պատմաբան Լէօ սիրտի մղկտումով կը գրէր. «Իմ դժբախտ, սրտիս սիրելի ծննդավայրը խորովուեց բոցերի մէջ...»: Թիֆլիսի «Սլովօ» թերթը 1920 Ապրիլ 16-ին կը գրէր. «Քաղաքի հայկական մասում քարը քարի վրայ չի մնացել»:

Հետեւաբար՝ 1992-ի հակահարուածը ուշացած պատասխանն էր 1920-ի վանտալութեան: Իսկ անկէ ետք կազմակերպուող Ծուշիի ազատագրութեան տօնահանդէսները՝ շառաչուն պատասխան Ծուշիի մէջ թէյ խմել ցանկացողներու՝ որոնք Պաքուի մէջ կը սիրեն ապրիլ անուրջներով ցնորական:

Երբ 9 Մայիս 1992-ին Սբ. Ղազանչեցոցի մէջ հայեր արտասուալիւր աչքերով կ'աղօթէին, անդին՝ անոր զանգակատունէն եւ գմբէթներէն կը հնչէին ղողանջները յաղթանակի՝

«ԱՐԱՐԱՏ»
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Ամերիկահայ Մայր Աթոռի Եւ Կիլիկեան Թեմեր

Շարունակուած էջ 8-էն

կէտները:

«Միացեալ» Թեմի Կանոնադրութիւնը

Յաջորդ հանգրուանը կազարով պիտի հասնէր միացեալ կազմական կանոնադրութեան գործին, որուն վրայ երկու թեմերը իբր թէ պիտի կարենային օրինաւորապէս միանալ՝ համաձայն ուղեցոյցի տրամադրութեանց: Այս ուղղութեամբ Մայր Աթոռի Թեմին կողմէ եօթ հոգիներու կանոնադրութեան խմբագրման յանձնարարութեամբ մը կազմուեցաւ՝ երեք հոգեւորականներէ եւ չորս աշխարհականներէ, որ բացառաբար պիտի փոխարինէր գործող յանձնարարութեամբ: Նոյն առաջարկը գրաւոր մատուցուեցաւ Կիլիկեան թեմի յանձնարարութեան, սակայն մերժում ստացուեցաւ այն առարկութեամբ որ չէին յարգուած «համագործակցութեան» համար առնուելիք քայլերը որոնք ուղեցոյցին մէջ նախատեսուած էին, ինչպէս ուսումնական ծրագիրներու միացեալ պատրաստութիւնն ու Ապրիլեան եղեռնի միացեալ ոգեկոչումը, մոռնալով սակայն որ անոնք պիտի կատարուէին «միացեալ թեմի Կազմական Կանոնադրութեան» երկուստեք ընդունուելէն ետք միայն:

Տարիները կը թաւալէին եւ 1981 Յուլիսէն 1982 Մայիս զոյգ յանձնարարութեան հինգ յաջորդական նիստեր գումարելով ընդունեցին ի նորոյ խմբագրութեամբ ուղեցոյցի մը բնագիրը որ ենթարկեցին երկու թեմական խորհուրդներուն: Էջմիածնական թեմի Պատգամաւորական Ժողովը վաւերացուց զայն: Նոր ուղեցոյցը կը բաղկանար հակիրճ նախաբանէ մը որուն կը յաջորդէր բովանդակութեան կառուցը եւ գործադրութեան ծրագիրը իր վեց ստորաբաժանումներով: Կը ճշդուէր թէ երկու թեմերը պիտի միանային վարչական գետնի վրայ եւ որպէս մէկ միաւոր դառնար Ամնայն Հայոց Կաթողիկոսութեան ենթակայ թեմ ինչպէս անցեալին հաստատուած էր Տ.Տ. Մկրտիչ Խրիմեան Հայրիկ Ամենայն Հայոց Կաթողիկոսէն:

Հոն նախատեսուած էր օրինական ձեւն ու կերպը միացեալ թեմի առաջնորդի ընտրութեան եւ թեմին ունենալիք յարգալից յարաբերութիւնը Կիլիկիոյ Աթոռին հետ: Ուղեցոյցին ընձեռած գործադրութեան կերպն ալ հետեւողականօրէն ծրագրուած էր գործակցութեան, կանոնադրութեան խմբագրման, եւ միեւնոյն թուականին ու միեւնոյն վայրին մէջ երկու թեմերու առանձին թեմական Ժողովներու վերջին անգամ գումարումին 1983 թուականի Յունուար 15-էն առաջ, կանոնադրութեան երկուստեք ընդունման, ու

անոր Ամենայն Հայոց եւ Կիլիկիոյ Կաթողիկոսներու կողմէ վաւերացման յաջորդական քայլերով: 1982-ի ուղեցոյցը որդեգրուեցաւ նաեւ Կիլիկեան թեմի պատգամաւորական Ժողովէն, ինչ որ լաւ նշան մը կը նկատուէր յառաջացող բանակցութեանց ճամբուն վրայ:

Մայր Աթոռի Դիրքը

Ամերիկահայ թեմի թեմական խորհուրդը ուղեցոյցը իսկոյն յղեց Մայր Աթոռ, եւ հաւանաբար նոյնը ըրին նաեւ միւսները՝ զայն Անթիլիաս դրկելով, ուրկէ պիտի հասնէին բացատրութիւններ, եւ կամ լաւագոյն պարագային հաւանութիւն ու վաւերացում: Ամենայն Հայոց Կաթողիկոսը գրաւորապէս կը պատասխանէր իր Յուլիս 14, 1982 թուակիր նամակով, գնահատելով հանդերձ տարուած խղճամիտ աշխատանքը, կը թելադրէր որ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան յատուկ յօդուածները վերցուէին ուղեցոյցէն, նկատի ունենալով որ երկու Աթոռներու միջեւ եղած անհամաձայնութիւնները իրենց յատուկ մակարդակին վրայ պէտք է լուծուէին, թեմական մակարդակի վրայ: Ակնարկուած յօդուածները մասնաւոր դիտարկութեամբ դրուած էին հոն որպէսզի աւելի նպաստաւոր եւ ապահով ըլլար Անթիլիասի ուղղեալ հրահրեր: Նման սկզբունքային դիտարկում Հայրապետին կողմէ չէր խանգարեր կատարուած աշխատանքը, եւ սակայն շատ դիւրաւ որպէս պատրուակ պիտի ծառայէր անհարկի ձգձգումի: Առաջնորդն ու թեմական խորհուրդը անհրաժեշտ տեսան անձամբ Մայր Աթոռ երթալու եւ հարցը Ամենայն Հայոց Կաթողիկոսին պարզաբանելու: Հարցապետը մնաց աներբեր այդ կարեւոր կէտին վրայ, եւ Առաջնորդն ու պատուիրակութիւնը վերադարձան Նիւ Եորք:

Կիլիկիոյ Աթոռին Դիրքը

Կիլիկեան թեմն ալ պատուիրակութիւն մը Անթիլիաս դրկեց տեղեկացնելու համար ուղեցոյցին եւ Ամենայն Հայոց Հայրապետին յանձնարարութիւններուն մասին, ուրկէ անյարիր բացատրութիւններ միայն հասան: Թէեւ ի վերջոյ բանակցութեանց յաջորդ քայլը, «միացեալ թեմի» կանոնադրութեան գործը կատարուեցաւ ամենայն բծախնդրութեամբ, սակայն ի վերջոյ տարիներու ճիգը ձախողութեան մատնուեցաւ երբ հասկնալի եղաւ որ Կիլիկեան թեմի Ժողովը կանոնադրութեան մի քանի կարեւոր յօդուածները բոլորովին ջնջել եւ կամ այլափոխել պահանջեց, ինչորոյ առարկայ ընելով նաեւ Գանատայի իրենց եկեղեցիները որոնք բոլորովին անհամաձայն մնացին թեմերու միացման գործին, բան մը որ վերջին պահուն յիշեցին:

մէջ կայ մէկ միացնող եւ հասարակ յայտարար մը, որ կը դառնայ մարտահրաւէր, այդ ալ մեր կեանքերը ինչպէս լիցքաւորել է՝ անկախ աշխարհագրական տեւանքներէ եւ պայմաններէ:

Եւ լիցքաւորումի գրաւակա՞նը՝ «Այն որ կու տանք ուրիշին»: Եւ ուրիշին պիտի տանք կեանք մը, որ ԲԱՐԻ է: Ուրիշին տալն է: Իսկ տալը՝ լիցքաւորելը, անպայմանօրէն ԲԱՐԻՆ:

ԻՆչպէս Կարելի Է Չսիրել Յոյրիւրը

Շարունակուած էջ 13-էն

- Աւտոբուսին եմ ուղում հասնել: Ես եմ բացում խանութը: Հենրիկ Չան, ի՞նչ կը լինի, հեռախօսիդ համարը տուր: Օրերը ցրտում են, մի օր խաշի եմ հրաւիրելու ձեզ:

- Կը տամ համարը, մինչ այդ ասա խնդրեմ, դու՛ պարսկահայ, ի՞նչպէս ես մաքուր հայերէնով խօսում:

- Ասեմ, պարոն Անասեան, նախ, կինս՝ Հայաստանի ծնունդ է ու մասնագիտութեամբ էլ՝ լրագրող, եւ յետոյ, իմ բոլոր գործաւորները հայաստանցի են: Նրանցից էլ սովորեցի իրենց պէս խօսել: Քառասուն տարի է անցել, քիչ չէ, փիլիսոփայում է բարեկամս:

Թելադրում եմ հեռախօսիս համարը, ու մինչեւ օրս «սպասում» վահագի հեռաձայնին...:

Վահագն ինձ չի շեցնել տուեց 40 տարուայ վաղեմութիւն ունեցող կառավարական հինարկների հետ կապուած մի քանի ուսանելի հետաքրքիր մանրամասներ: Ահա դրանցից մէկը:

Ամերիկա ոտք դնելու առաջին շաբաթում իսկ, մեր ընտանիքը հրաժարուեց կառավարական նպաստ ստանալ երկու փոքրահասակ երեխաների համար: Ես եւ Մարիետան բաւական ցածր աշխատածամով անմիջապէս աշխատանքի տեղաւորուեցինք:

Հինգ-վեց ամիս անց, Լոս Անջելէսի Գաղթականական Գրասենեակից (Immigration Office) մի փարթամ պահարան ստացանք, որից յայտնի դարձաւ, որ օրինապահ սպրեկուրտիս եւ կառավարական նպաստ ստացած չլինելու համար, մեր ընտանիքի բոլոր անդամներին թոյլատրուած է լրացնել համապատասխան թղթերը եւ դիմել գրասենեակ՝ Կանաչ քար ստանալու համար:

Դժուարանում եմ նկարագրել այն ուրախութիւնն ու խանդավառութիւնը, որ տիրեց մեր՝ մէկ սենեականոց բնակարանում, որի մէջ կար տափակ, ձերմակ գոյնի դաշնամուր, որ գնել էինք իմ կազմակերպած առաջին համերգի եկամուտով (Հոկտ. 5, 1978, Breakfast Club, Riversid Dr., L.A.): Այդ համերգը կայացաւ, որքան էլ տարօրինակ հնչի, մեր՝ Լոս Անջելէս հաստատուելուց երկուսեկէս ամիս անց: Համերգի մենակատարներն էին քանոնահար Արա Սեւանեանը, Յարութ Բամբուկչեանը եւ Մարիետա Անասեանը:

... Նայում եմ իւրաքանչիւր անձի համար մի քանի թերթից բաղկացած հարցարանը.- ինչպէս բոլորը, ես էլ պիտի դիմեմ փաստաբանական գրասենեակ: Ես դեռ այդ ուժը չունեմ...: - Հենրիկ, ախպերս, փորձիր դու լրացնել, մտորում եմ ես,- կ'անցնի՝ կ'անցնի, չէ՛՝ այդ դէպքում կը դիմենք փաստաբանի:

Ինչեւէ, մեծ դժուարութեամբ ինձ յաջողուեց լրացնել Գրին քարտի հարցարանները: Յաջորդ առաւօտեան, ժամը 6-ին իջայ Դաունթաուն: Գաղթականական գրասենեակում երկար սպասեցի: Վերջապէս

բարձրախօսը յարտարարեց իմ թիւն ու պատուհանի համարը:

«Բարի լոյս» եմ ասում ապակու ետեւում նստած բարետես կնոջը, վերջինս բարի ժպիտով պատասխանում է իմ ողջոյնին եւ հարցնում.

- Ինչո՞վ կարող եմ ձեզ օգնել պարոն:

- Ես..., ես բերել եմ իմ ընտանիքի անդամների հարցաթերթիկները՝ քրին քարտ ստանալու համար:

- Դուք մենա՞կ էք, ո՞ւր է ձեր փաստաբանը:

- Ես փաստաբան չունեմ, ինքս եմ լրացրել հարցաթերթիկները, հնարաւոր է, որ սխալներ լինեն, կը ներէք դրա համար:

- Ե՞րբ էք ժամանել Միացեալ Նահանգներ:

- Վեց ամիս առաջ:

- Դուք նամակ ստացե՞լ էք...

- Այո՞, տիկին:

- Խնդրեմ ցոյց տուէք այդ նամակը:

Տիկինը ուշադրութեամբ ընթերցեց նամակը եւ՝

- Ես մի քանի ըրպէից կը վերադառնամ,- ասաց նա,- սպասէք սրահում, ես ձեզ կը կանչեմ: Սպասումի տանջալից վայրկեաններ:

- Մի 15-20 ըրպէ անց՝ Պարոն Անասեան, խնդրում եմ մօտենալ 18-րդ պատուհանին, -ծանօթ, հաճելի ձայնն է.

- Դուք հիմնականում ամէն ինչ ճիշդ էք լրացրել, միայն մէկ երկու տեղ այսպէս պիտի գրէք,- ասաց նա ու ցոյց տուեց ճիշդ ձեւը:

- Յաջորդ անգամին այդպէս կ'անեմ, չի ներէք,

- Պէ՛, ինչո՞ւ..., դուք կ'օգնէք ուրիշների, մտերիմներին, բարեկամներին, ինչո՞ւ պիտի ահագին դրամ վճարէք փաստաբաններին, երբ ինքներդ կարող էք ձեր հարցերը լուծել: Իսկ հիմա ազատ էք, կարող էք գնալ: Մէկ-երկու ամսուայ ընթացքին կ'ստանաք ձեր քարտերը:

Իսկապէս, մէկ ամիս յետոյ եկան մեր Կանաչ քարտերը, այժմ հերթն եկաւ քաղաքացիութիւն ստանալու:

... Նախկինում շատ աւելի հայ ընտանիքներ էին ապրում Հովիվուդում: Տարիների ընթացքում, ում ձեռքը «գրպանին հասաւ»՝ թողեց Հովիվուդը եւ հաստատուեց Գլենդէլում, Բրըքլինում եւ այլ՝ իբր հանգստաւայր վայրերում:

- Չէ՛, ո՞չ, ես չգնացի, թէեւ կարող էի գնալ: Ես սիրում եմ Հովիվուդը: Սիրում եմ աղմկոտ, շարժուն քաղաք: Մենք հովիվուդցիներս շատ չենք սիրում Գլենդէլ գնալ, եւ, եթէ գնում էլ՝ միայն մշակութային ձեռնարկներին ներկայ լինելու եւ մէկ էլ բարեկամներին, ընկերներին այցելելու համար:

... Արդէն հոգնել եմ քայլելուց: Բայց հոգիս խաղաղ է: Բազմաթիւ մանր-մունր երեւոյթների բովում կրկին համազուեցի, թէ որքա՞ն քիչ բան է պէտք, որպէսզի մարդ ուրախ եւ երջանիկ զգայ իրեն:

... Արդէն հոգնել եմ քայլելուց: Բայց հոգիս խաղաղ է: Բազմաթիւ մանր-մունր երեւոյթների բովում կրկին համազուեցի, թէ որքա՞ն քիչ բան է պէտք, որպէսզի մարդ ուրախ եւ երջանիկ զգայ իրեն:

«Հաշուեյարդար»

Շարունակուած էջ 16-էն

ուրիշին: Բարին:

Ի՞նչ կեանքեր պիտի կերտենք այս ժահրէն ետք: Բարին:

Հաշուեյարդար՞: Այօր՝ իմ, քու եւ մեր բոլորին:

Եթէ իւրաքանչիւրս ունի իր կեանքը, որ կ'ունենայ ուղղութիւն, կը ստանայ ընթացք եւ կը կազմաւորուի հոս թէ՛ հոն: Եւ իւրաքանչիւրիս կազմաւորուող կեանքին

Ձեր Ծանուցումները Վստահեցեք
«Մասիս» Շաբաթերթին
 Tel: (626) 797-7680



ՄԱՐԴԱՀԱՄԱՐԸ ՊԱՐԶ Է ԵՒ 9 ՀԱՐՑՈՒՄՆԵՐՈՎ ՀԱՐՑԱԽՈՅԶ

ՀԱՍԱՅՆՔՆԵՐԸ ԿԱՐԵՒՈՐ ԵՆ ՄԱՍՆԱԿՑԵՑԷՔ
 ԸՆՏԱՆԻՔՆԵՐԸ ԿԱՐԵՒՈՐ ԵՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻՆ
 ԱՄԷՆ ԱՆՁ ԿԱՐԵՒՈՐ Է ԱՅՍՈՐ



CaliforniaCensus.org